

ՄԱՐԶԻԳ

հսլս

Մարզիկ

ՄՃԼԵ ՐԵՅԻՆԵ ՏԻԵՐԵ
ՏՎԵՐԻՄԵՆ ԵՐՈՒՏ

marzig

SPORTS MAGAZINE

ՏԻՐԻ ՏԱՐԻ, 2012, ԹԻԻ 3 (357) - VOL. XXXI N° 3 - ԵԴԵԴ ՏԱԼԻՄ - ԵԼԻՄԻՆԻՄ ԵԼԻՄԻՆԻՄ





ԱՅՍ ՅԱՏՈՒԿ ԹԻԸ

«Մարզիկ»ի այս յատուկ թիւը նուիրուած է ֆութպոլի տարուան մեծագոյն իրադարձութեան՝ «Եւրօ 2012»-ին, որ 8 Յունիսէն 1 Յուլիս տեղի կ'ունենայ Լեհաստանի եւ Ուքրանիոյ մէջ:

«Մարզիկ»ի մարզական միջազգային լուրերու աշխատակիցը՝ Գէորգ Թորոյեան ընդհանուր ակնարկ մը կը նետէ «Եւրօ 2012»-ի զտումի մրցումներուն վրայ, ապա առանձնաբար կը ներկայացնէ եւրոպական ախտյեանութեան մասնակից 16 երկիրներու ազգային խումբերը իրենց գլխաւոր աստղերով, յաջողութիւններով եւ տիտղոսին տիրացման հաւանականութիւններով:



ԹԻՒՆԻՆ ՆԻՒՆԵՐԸ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله ریاضیه شهریه تصدیرها جمعیه الهمنتمن الریاضی



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.Ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

31ՐԴ ՏԱՐԻ, 2012, ԹԻՒ 3 (357)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
 Սեդա Պէշկեան (Լիբանան),
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
 Պատրիկ Կիւլպէնկեան, Գրիգորիս
 Պողարեան, Աբօ Մոսիկեան
 (Լիբանան), Յարութ Մատենլեան
 (Արեւմտեան Մ. Նահանգներ),
 Զարեհ Տէրվիշեան (Գանատա)

Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրժ Համուտ, Եհնիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 4000 լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշդուած է 48000 լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.Ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$70,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



«ԵՈՒՐՕ 2012»

- Խմբագրական/ Ֆութպոլին նպատակը 2
- «Եուրօ 2012». գտումի մրցումներուն ընդհանուր պատկերը 3
- «Եուրօ 2012»-ի կեդրոնի իրաւարարները 7
- «Եուրօ 2012»-ի խաղերու ամբողջական յայտագիրը 20



Ա. ԽՄԲԱԿ

- Լեհաստան 8
- Յունաստան 10
- Ռուսիա 12
- Չեխիա 14

Բ. ԽՄԲԱԿ

- Հոլանտա 16
- Դանիա 18
- Գերմանիա 22
- Փորթուգալ 24

Գ. ԽՄԲԱԿ

- Սպանիա 26
- Իտալիա 28
- Այիր 30
- Խրուաթիա 32

Դ. ԽՄԲԱԿ

- Ուքրանիա 34
- Շուէտ 36
- Ֆրանսա 38
- Անգլիա 40





Հ Ա Յ Կ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
Յ Ո Ւ Թ Ա Կ Ո Ւ Լ Տ Ի Ն
Կ Ե Ն Ո Ւ Մ Ն Ե Ր Ի
Կ Ե Ն Տ Ր Ո Ն

ՖՈՒԹԳՈՒԼԻՆ ՆՊԱՏԱԿԸ

(«ԵՈՒՐՕ 2012»-ԻՆ ԱՌԻԹՈՎ)

Տարբեր է ֆութպոլը: Ընթացիկ, տեղական ու մասնակի հաճոյք է մը ան բարձրացած է ազգային արժանապատուութեան մը կիրքին:

Յաճախ, ազգային աղետ կը նկատուի ազգային խումբի մը պարտութիւնը եւրոպայի թէ աշխարհի ախոյեանութեան մրցումներուն: Կարգ մը երկիրներու պարագային, պարտութիւնները իրենց անդրադարձը կ'ունենան քաղաքական ընտրութիւններուն վրայ:

Սպանիոյ ազգային խումբը, երբ «Եուրօ 2008»-ի տիտղոսին տիրացաւ, սպանացի ժողովուրդը ուրախացաւ այնքան, որքան պիտի ուրախանար՝ եթէ երկրին տնտեսական տագնապը լուծւէր հիմնովին:

Անկէ առաջ՝ 2004-ին, Յունաստան ուրախութեան նուազ տօնախմբութիւններ չկազմակերպեց:

Ֆութպոլի ժողովրդականութիւնը վիպականացած բան մըն ալ ունի իր շուրջ եւ դիրութեամբ կրնայ գրականութեան հոլմ նիւթ դառնալ: Հետաքրքրական է, արդարեւ, ուսումնասիրել հանդիսատեսի եւ ֆութպոլիստի հոգեբանութիւնը:

Դէպի դաշտ երթով կը սկսի ոգեւորութիւնը, ու դաշտէն վերադարձով ալ չի դադրիր անոր ազդեցութիւնը:

Նախատեսութիւններ, գրաւ, մեղադրանք, գնահատանք, ջղայնութիւն, պոռչտուք, յոյս, յուսախաբութիւն, ցատկընտուք, լռութիւն, հեւք, աղմուկ, ծափ, ոստում, գիրկընդխառնում, սուլոց, թըմբուկ, դրօշակ, անէծք, հայիոյանք, կռիւ ու... ծեծուրոտուք:

Բաներ, ի՞նչ բաներ, կապուած կլոր գնդակին, կորսուած կամ իրականացած կոլի իւրաքանչիւր առիթին:

Կեանքը ինքնին կոլ նշանակելու նըպատակ է քիչ մը, քիչ մը շատ: Ու վա՛յ պարտուողին:

Այս բոլորին մէջ գաղտնիք մը կայ, որ հազարներ կը տանի ու կը բերէ: Վերջին հաշուով մեղաւոր ոչինչ կայ այս եռուզեռին մէջ:

Փակ սենեակներու համակարգչային խաղերէն հազար անգամ վեր է դաշտային այս մարզախաղը, որ կը պահանջէ թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ մտքի ճկունութիւն եւ աշխուժութիւն:

Ի՞նչ է սակայն մարզական այս խաղին նպատակը:

Ֆութպոլը *խմբային ծիգ* մը արդիւնաւորուած տեսնելու, մարդիկը *հաւաքական մտածողութեան* եւ *իրերօգնութեան* մղելու կը ձգտի:

Դաշտին մէկ ծայրէն միւսը, առանձինն, կարելի չէ ու պէտք չէ նպատակին տանիլ գնդակը, այլ՝ օժանդակութեամբը նոյն նպատակին ձգտող այլ ընկերներու.- ահաւասի՛կ թէ ուր կը կայանայ ֆութպոլին իմաստութիւնն ու թելադրականութիւնը:

Ասով կը բացատրուի նաեւ համակիր հանդիսատեսներուն ֆութպոլիստներու քաջալերանքը, տառապանքը, յուզումը, որ նոյն նպատակին հասնելու հաւաքական հասարակաց երեւոյթն է:

Այս երեւոյթը, սակայն, մասնակի պիտի ըլլար, եթէ ֆութպոլիստէն ու հանդիսատեսէն հաւասարապէս չպահանջուէր հակառակորդին նկատմամբ ազնուութիւն, յարգանք եւ պարկեշտութիւն:

Արժանաւորը պէտք է յաղթէ, ու եթէ նոյնիսկ յաղթողը հակառակորդ խումբն է, պէտք է ծափահարուի:

Դաշտէն անպայման յաղթական դուրս գալու ծիգն ու որոշումը գնահատելի կը մնայ այնքան ատեն՝ որքան այդ «անպայման»ը չ'անցնիր պատշաճութեան եւ ազնուութեան սահմանները:

Մեծ ու ազնիւ է, իրա՛ւ է այն մարզիկը, որ գիտէ իր պարտութիւնը ընդունիլ պարզութեամբ ու յաղթական խումբը շնորհաւորելով:

Նոյնը՝ հանդիսատեսին համար: Ու ատով միայն մարդկային բոլոր արժէքներուն, ձգտումներուն եւ իրագործումներուն խարիսխը կը գեղեցկանայ եւ կը տեւականանայ բարոյական ամո՛ւր հիմքով:



«ԵՈՒՐՈ 2012». ԶՏՈՒՄԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ


7 Փետրուար 2010-ին կատարուեցաւ «Եուրո 2012»-ի զտումի մրցումներու խմբակներուն վիճակաձգութիւնը: Բացի կազմակերպիչ Ուքրանիայէն ու Լեհաստանէն մնացեալ 51 երկիրները բերին իրենց մասնակցութիւնը: Անոնք բաժնուեցան ինը խմբակներու: Առաջին վեց խմբակները բաղկացան վեց խումբերէ, իսկ մնացեալ երեք խմբակները բաղկացան հինգ խումբերէ: Առաջին դիրքը գրաւող խումբերը ինքնաբերաբար իրաւունք ստացան ուղղակի մասնակցելու «Եուրո 2012»-ին: Ինը խմբակներէն լաւագոյն երկրորդ դիրքը գրաւող կազմը միացաւ վերոնշեալ ինը խումբերուն: Իսկ ութը խմբակներու երկրորդ դիրքը գրաւող խումբերը կատարեցին փլէյ-օֆի մրցումներ եւ յաղթական չորս կազմերը ամբողջացուցին մասնակից 16 կազմերը:

Ա. ԽՄԲԱԿ

Աւստրիա, Ազրպէյճան, Գերմանիա, Պելճիքա, Ղազախստան եւ Թուրքիա:

Այս խմբակին մրցումները սկսան 3 Սեպտեմբեր 2010-ին: Գերմանիա անսխալական եղաւ: Ան գերազանցեց բոլոր մրցակիցները թէ՛ իր արձանագրած արդիւնքներով եւ թէ՛ իր խաղամակարդակով: Ան իր բոլոր մրցումները աւարտեց յաղթանակով: Նշանակեց 34 կոլ եւ ստացաւ 7 կոլ: Միրոսլաւ Քլոզէ հանդիսացաւ

խմբակին կոլ-սքորըրը՝ 9 կոլով: Երկրորդ դիրքին համար յամառ պայքար մղեցին պելճիքացիներն ու թուրքերը: Վերջին մրցումներուն պելճիքացիք յուսախաբ ըրին իրենց համակիրները: Անոնք անիմաստ կէտեր կորսնցուցին Աւստրիոյ դէմ իրենց մրցումին եւ պարտութիւն մը արձանագրեցին գերմանացիներու դէմ: Մինչ թուրքերը Ազրպէյճանէն պարտուելէ ետք, երբ կը կարծուէր թէ հրաժեշտ պիտի տան մրցաշարքի մասնակցութեան տոմսին, չյուսահատեցան եւ յաջողեցան գրաւել երկրորդ դիրքը՝ Գերմանիոյ ետին: Աւստրիա ունեցաւ լուսանցքային դեր: Աւստրիացիք տակաւին շատ հեռու են միջազգային մրցակցութիւններէ: Ազրպէյճանցիք յաջողեցան երկու խաղ յաղթել եւ մէկ հաւասարութիւն արձանագրելով գերազանցել ղազախները: Այս վերջինները խմբակին ամէնէն տկար կազմն էին եւ հեռու էին մեծերու մակարդակէն: Խըմբակին 30 մրցումներուն նշանակուեցաւ 100 կոլեր:



Հայաստան-Մակեդոնիա մրցումէն:

Գերմանիոյ ետին: Աւստրիա ունեցաւ լուսանցքային դեր: Աւստրիացիք տակաւին շատ հեռու են միջազգային մրցակցութիւններէ: Ազրպէյճանցիք յաջողեցան երկու խաղ յաղթել եւ մէկ հաւասարութիւն արձանագրելով գերազանցել ղազախները: Այս վերջինները խմբակին ամէնէն տկար կազմն էին եւ հեռու էին մեծերու մակարդակէն: Խըմբակին 30 մրցումներուն նշանակուեցաւ 100 կոլեր:

Բ. ԽՄԲԱԿ

Մակեդոնիա, Այիր, Հայաստան, Ռուսիա, Սլովաքիա եւ Անտորա:

Այս խմբակին մրցումները սկսան 3 Սեպտեմբեր 2010-ին: Կը կարծուէր թէ մրցակցութիւնը սուր պիտի ըլլայ Ռուսիոյ, Սլովաքիոյ եւ Այիրի միջեւ: Մակայն ֆութպոլի աշխարհը միշտ ալ անակնկալ-

ներ կը պարգեւէ: Խմբակին մէջ Ռուսիա ամէնէն ինքնավստահն էր ու ամէնէն կայուն արդիւնքներ արձանագրողը եղաւ: Ռուսերը հաստատակամ էին հասնելու «Եւրո 2012»-ի աւարտականներուն: Այիր եւ Սլովաքիա լաւ ձեւով սկսան մրցաշարքը: Իրլանտացիք հակառակ կարգ մը անկայուն արդիւնքներու, աւելի յամառ գտնուեցան, եւ միայն վերջին մրցումին Հայաստանին յաղթելով կարողացան գրաւել խմբակին Բ. դիրքը, Ռուսիոյ ետին: Սլովաքները ցուցադրեցին ոչ համոզիչ խաղարկութիւն եւ արձանագրեցին ձախող արդիւնքներ: Հայաստանի կազմը ոչ համոզիչ մեկնարկէ ետք, կարողացաւ յաջողութիւններու ճամբան գտնել եւ մետասաներորդ պահուն զրկուեցաւ երկրորդ տոմսէն: Մակեդոնիա երբեմն կարեւոր կէտեր խլեց, սակայն ոչինչ ներկայացուց: Իսկ Անտորայի կազմը ծառայեց մնացեալ կազմերուն կողմէ վրէժձը բարելաւելու: Խմբակին 30 մրցումներուն նշանակուեցան 70 կոլեր: Հակառակ խմբակին երրորդ դիրքը գրաւելուն, հայրենի կազմի մարզիկներէն Հենրիխ Մխիթարեան հանդիսացաւ այս խմբակին կողմէ 6 կոլով, իսկ Հայաստան հանդիսացաւ խմբակին առաւելագոյն կոլեր նշանակող կազմը՝ 22 կոլով:

Գ. ԽՄԲԱԿ

Իտալիա, Սերպիա, Սլովենիա, Հիւսիսային Իրլանտա, Էսթոնիա եւ Ֆարո կղզիներ:

Այս խմբակին մրցումները սկսան 11 Օգոստոս 2010-ին: Աշխարհի ախոյեանութեան ձախողելէ ետք՝ իտալացիք վերանորոգուած կազմով ներկայացան եւ յաջողեցան իրենք զիրենք պարտադրել խմբակի մը մէջ, ուր ճիշդ է մեծեր չկային, սակայն կային միջակ թեկնածուներ: Իտալացիք ընկրկումներ չարձանագրեցին այս մրցաշարքին. անոնք ցուցադրեցին իտալական ֆուլթայոլին յատուկ կազմակերպուած խաղ եւ արձանագրեցին դրական արդիւնքներ: Էսթոնիա եղաւ խմբակին մեծագոյն անակնկալը՝ գերազանցելով Սերպիան ու Սլովենիան: Էսթոնիացիք բացառիկ արդիւնքներ չարձանագ-

րեցին, այլ՝ պարզապէս օգտուեցան միւս կազմերու ձախողութիւններէն եւ կորսնցուցած կէտերէն: Սերպերը կը նկատուէին խմբակին երկրորդ թեկնածուն իտալացիներու կողքին, սակայն անոնք յուսախաբ ըրին իրենց համակիրները եւ քանի մը անիմաստ պարտութիւններ կրելով գլխիկոր հեռացան մրցաշարքէն: Մինչ Սլովենիա պայքարեցաւ «սպրդելու» Սլովենիոյ եւ Սերպիոյ մէջէն եւ հասնելու երկրորդ դիրք: Հիւսիսային Իրլանտա յոյսեր չունէր իրագործումներ կատարելու, սակայն կարողացաւ կէտեր «կորզել» կարգ մը խումբերէ եւ արգիլեց զանոնք հասնելու երկրորդ դիրք: Մինչ Ֆարո կղզիները յաջողեղան յաղթանակ մը եւ հաւասարութիւն մը արձանագրել: Այս խմբակին մէջ կատարուած 30 մրցումներուն նշանակուեցան 74 կոլեր: Կոլ-սքորըը հանդիսացաւ իտալացի Անթոնիո Քասանո՝ 6 կոլով:

Դ. ԽՄԲԱԿ

Ալպանիա, Պոսնիա, Ֆրանսա, Ռումանիա, Պիելոուսիա եւ Լիւքսեմպուրկ:

Այս խմբակին մրցումները սկսան 3 Սեպտեմբեր 2010-ին: Ամէն ինչ անորոշ էր: Զախող մոնտիալէ մը ետք՝ Ֆրանսայի կազմը իր առաջին մրցումին իր դաշտին վրայ պարտութիւն մը կրելով, ստեղծեց այն տպաւորութիւնը, որ խմբակին մէջ անորոշութիւնը պիտի շարունակուի եւ բոլոր կազմերն ալ հաւասար ուժերով պիտի պայքարին: Սակայն, Ֆրանսացիք շատ շուտ վերագտան իրենք զիրենք եւ յաղթանակէ յաղթանակ սուրալով բազմեցան առաջին դիրքին վրայ: Պոսնիացիք եւս վճռակամ ու հաստատակամ սկսան մրցաշարքը եւ միայն մէկ կէտով զիջեցան առաջին դիրքը: Պիելոուսիա եւ Ռումանիա ճիգ թափեցին մրցակցութեան մէջ մտնելու: Պիելոուսիա իր առաջին մրցումին Ֆրանսայի յաղթելով այն տպաւորութիւնը ստեղծեց, որ պիտի մնայ անզիջող պայքարի մէջ, սակայն ճերմակ ռուսերը Ալպանիոյ եւ Լիւքսեմպուրկի նման կազմերու դէմ կէտեր կորսնցուցին եւ դուրս մնացին: Ռումանացիք գտումի մրցումներու սկզբնաւորութենէն յու-

չեցին, թէ այնքան ալ լաւ չեն պատրաստուած, թէ եւ փորձեցին «բան մը ընել»: Ալպանիա եւ Լիւքսեմպուրկ պարզապէս կարգ մը մրցումներու յաջողեցան «սուղ» կէտեր գրպանել կարգ մը խումբերէ: Այս խմբակին կատարած 30 մրցումներուն նշանակուեցան 63 կոլեր: Կոլ-սքորըը հանդիսացաւ ռումանացի Ատրիան Մուլթու՝ 6 կոլով:

Ե. ԽՄԲԱԿ

Հոլանտա, Հունգարիա, Մոլտաւիա, Շուէտ, Ֆինլանտա եւ Սան Մարինո:

Ե. խմբակին մրցումները սկսան 3 Սեպտեմբեր 2010-ին: Նախքան մրցումները կը կարծուէր թէ մրցակցութիւնը պիտի կեդրոնանայ Հոլանտայի եւ Շուէտի միջեւ: Սակայն աշխարհի փոխ ախոյեան հոլանտացիք առիթ չտուին որեւէ կազմի իրենց ընթացքը խանգարելու: Անոնք աննահանջ կերպով յաղ-



Յաղթանակի ցնծութիւն:



Թանակներ արձանագրեցին: Միայն վերջին մրցումին, երբ անոնք ապահոված էին իրենց տոմսը, պարտութիւն մը կրեցին Շուէտի կազմէն: Այս վերջինին լուրջ մրցակից հանդիսացաւ Հունգարիոյ կազմը: Փուլքաշներու, Քոչիսներու եւ աւելի ուշ Թորոչիքներու եւ Նիլասիներու յետնորդները «զարթօնքի» նշաններ ցոյց կու տան: Հունգարացիք վերջին քսան տարիներու իրենց լաւագոյն արդիւնքները արձանագրեցին: Ճիշդ է, որ անոնք չկարողացան գերազանցել Շուէտի կազմը, սակայն յուշեցին թէ յառաջիկային աւելի լուրջ մրցակցութեան մէջ կրնան ըլլալ: Շուէտացիք, որ վերջին մոնտիալէն բացակայ էին, ունեցան յաջող խաղարկութիւն եւ հանգստօրէն գրաւեցին խմբակին Բ. դիրքը: Ֆինլանտացիք վերջին տասնամեակին վերստին սկսած են լուսանցքային դեր ունենալ մրցաշարքերու ընթացքին: Մոլտաւիա արձանագրեց երեք յաղթանակ, սակայն այդ յաղթանակները բաւարար չէին զանոնք «Եուրօ»ի մասնակից դարձնելու: Սան Մարինոյի կազմը ոչ միայն կէտ չկարողացաւ ապահովել, այլեւ՝ նոյնիսկ չյաջողեցաւ կոլ նշանակել, փոխարէնը ստանալով 53 կոլ: Խմբակին մէջ կատարուած 30 մրցումներուն նշանակուեցան 118 կոլեր: Լաւագոյն կոլ-սքորըը հանդիսացաւ հոլանտացի Քլաս Եան Հիւնթելարը՝ 12 կոլով:

2. ԽՄԲԱԿ

Խրուաթիա, Լատվիա, Իսրայէլ, Յունաստան, Վրաստան եւ Մալթա:

Այս խմբակին մրցումները սկսան 2 Սեպտեմբեր 2010-ին: Առաջին երկու հանգրուաններու արդիւնքներէն ի յայտ

եկաւ, որ խմբակին գլխաւոր թեկնածուները պիտի ըլլան Յունաստանն ու Խրուաթիան: Այս երկու կազմերը յամառօրէն պայքարեցան առաջին դիրքը գրաւելու, որպէսզի չմասնակցին փլէյ-օֆի մրցումներուն: Փոխն ի փոխ գրաւելով առաջին դիրքը, ի վերջոյ յոյները առանց պարտութիւն կրելու, երկու կէտի առաւելութեամբ գրաւեցին առաջին դիրքը: Խմբակին միւս անդամներէն Իսրայէլ, Լատվիա եւ Վրաստան փորձեցին մրցակցութեան մէջ մտնել վերոնշեալ երկու կազմերուն հետ, սակայն անոնց, մասնաւորաբար Լատվիոյ եւ Վրաստանի «ուժերը» բաւարար չէին: Ճիշդ է, որ վերջին երկուքը յաջողեցան կէտեր խլել մեծերէն, սակայն կրեցին նաեւ անիմաստ պարտութիւններ: Մինչ Իսրայէլ աւելի կազմակերպուած ըլլալով, միշտ ալ աւելի մօտ եղաւ երկրորդ դիրքին, սակայն յոյներու եւ խրուաթներու մակարդակն ու փորձառութիւնը զիրենք հեռու պահեց Իսրայէլէն: Խմբակին վեցերորդ անդամը՝ Մալթա որեւէ յաղթանակի ցնծութիւնը չապրեցաւ: Ան արձանագրեց միայն մէկ հաւասարութիւն՝ այն ալ վրացիներու դէմ: Այս խմբակին մրցումներուն նշանակուեցան 65 կոլեր: Խմբակին կոլ-սքորըը հանդիսացաւ խրուաթ Նիքօ Քրանժսարը՝ 4 կոլով:

Է. ԽՄԲԱԿ

Անգլիա, Զուիցերիա, Մոնթենեկրօ, Պուլկարիա եւ Կալէս:

Այս խմբակին մրցումները սկսան 3 Սեպտեմբեր 2010-ին: Մրցաշարքի սկզբնաւորութենէն յստակ էր, որ անգլիացիք պիտի ըլլան խմբակին գլխաւոր թեկնածուն: Անոնք որեւէ մրցում չկորսնցուցին եւ կարեւոր մրցումներու յաղթանակ-

ներ արձանագրելով, ապահովեցին անհրաժեշտ կէտերը եւ գրաւեցին խմբակին առաջին դիրքը: Երկրորդ դիրքի համար մնացեալ չորս կազմերն ալ թեկնածու էին: Սակայն, Պուլկարիա «ուժասպառ» վիճակի մէջ «բազմեցաւ» վերջին դիրքին վրայ եւ իր կատարած ութը մրցումներէն ապահովեց միայն հինգ կէտ: Մինչ Մոնթենեկրո, Զուիցերիա եւ Կալէս պայքարեցան երկրորդ տոմսին համար: Բոլորին նախատեսուած թիւնն էր, որ գուիցերիացիք կը յաջողին երկրորդ դիրքը ապահովել: Անոնք սակայն շատ ձախող մեկնարկ մը ունեցան: Իրենց առաջին երկու մրցումներուն պարտուելէ ետք, գուիցերիացիք անդրադարձան, որ պէտք է մրցին եւ յաղթանակներ ապահովեն: Կալէս անկայուն արդիւնքներ արձանագրեց եւ այդ պատճառով զրկուեցաւ երկրորդ դիրքէն: Մոնթենեկրո համեմատաբար աւելի լաւ եւ կայուն արդիւնքներ արձանագրեց: Ճիշդ է, որ կարգ մը խաղերու ձախողութիւններ ալ ունեցաւ, սակայն յաջողեցաւ գրաւել երկրորդ դիրքը եւ հասնիլ փլէյ-օֆի մրցումներուն: Խմբակին մէջ կատարուած 20 մրցումներուն նշանակուեցան 43 կոլեր: Լաւագոյն կոլ-սքորըը հանդիսացաւ գուիցերիացի Խերտան Շաքիրի՝ 4 կոլով:

Ը. ԽՄԲԱԿ

Փորթուգալ, Նորվեկիա, Դանիա, Իսլանտա եւ Կիպրոս:

Այս խմբակին մէջ կը կարծուէր որ Փորթուգալ պիտի ըլլայ առաջին դիրքին վրայ, իսկ սկանտինաւեան երկիրները պիտի մրցին երկրորդ դիրքին համար: 3 Սեպտեմբեր 2010-ին մեկնարկած խաղերը սակայն ուրիշ պատկեր մը պարզեցին: Փորթուգալ իր առաջին երկու մրցումներուն ձախողելէ ետք՝ «արթնցաւ» եւ միայն հետեւողական յաղթանակներ արձանագրելով յաջողեցաւ հասնիլ երկրորդ դիրք: Դանիա իր հէքիաթային օրերը ետին ձգած ըլլալով հանդերձ՝ ներկայացուց գեղեցիկ ֆուլթայուլ եւ հանգիստ գրաւեց առաջին դիրքը: Նորվեկիա յամառօրէն պայքարեցաւ եւ Փորթուգալին հաւասար կէտեր հաւաքեց, սակայն դուրս մնաց իր տկար կոլ-էվըրէյ-ճին պատճառով: Սկանտինաւիոյ երրորդ ներկայացուցիչը՝ Իսլանտա ոչինչ կարողացաւ ընել, բացի մէկ յաղթանակ եւ մէկ հաւասարութիւն արձանագրելէ: Կիպրոսի կազմը իր առաջին մրցումին Փորթուգալի մէջ չորս հաւասար արդիւնք արձանագրելէ ետք, կարծուեցաւ թէ պիտի շարունակէ իր անակնկալները, սակայն անակնկալը այն եղաւ, որ ան այդ մրցումէն ետք արձանագրեց հաւասարութիւն մը եւս... իսկ մնացեալ մրցումները աւարտեց պարտութեամբ: Խմբակին մէջ կատարուած մրցումներուն նշանակուեցան 59 կոլեր, իսկ լաւագոյն կոլ-սքորըըը հանդիսացաւ փորթուգալցի Ռոնալտօ՝ 5 կոլով:

Թ. ԽՄԲԱԿ

Չեխիա, Սկովտիա, Սպանիա, Լիթուանիա եւ Լիխթենշթայն:

Աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան Սպանիա անմրցելի էր այս խմբակին մէջ: Անոր մրցակիցները զինք չէին մտահոգեր եւ արդիւնքներն ալ այդ մէկը ցոյց տուին: Սպանիա Գերմանիոյ նման իր բոլոր մրցումները աւարտեց յաղթանակով: 3

Սեպտեմբեր 2010-ին սկսած մրցումներուն ակներեւ էր, որ հիմնական մրցակցութիւնը պիտի ընթանայ Սկովտիոյ եւ Չեխիոյ միջեւ: Երկու կազմերն ալ նոյն արդիւնքները արձանագրելու ընթացքի մէջ էին: Վճռորոշ եղան անոնց միջեւ կայացած երկու հանդիպումները: Չեխերը արձանագրեցին յաղթանակ մը եւ հաւասարութիւն մը, ինչ որ չորս կէտի առաւելութիւն մը տուաւ արեւելեան Եւրոպայի այս ներկայացուցիչին, որպէսզի գրաւէ երկրորդ դիրքը: Մինչ Պալթեաններու ներկայացուցիչ Լիթուանիա եւ «փոքրիկն» Լիխթենշթայն շատ թոյլ էին եւ իրենց արձանագրած տկար արդիւնքներով պարզապէս ամբողջացուցին ցուցակը: Խմբակին մէջ կատարուած քսան մրցումներուն նշանակուեցան 53 կոլեր, իսկ կոլ-սքորըըըը հանդիսացաւ սպանացի Տալիտ Վիլլա՝ 7 կոլով:

ՓԼԵՅ-ՕՖԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Զտումի մրցումներու առաջին հանգրուանի աւարտին ութը խումբերը հասան երկրորդ հանգրուան: Թուրքիա, Էսթոնիա, Չեխիա, Խրուաթիա, Պոսնիա, Փորթուգալ, Այիր եւ Մոնթենեկրո պիտի մրցէին հասնելու Լեհաստան եւ Ուքրանիա: 15 եւ 19 Նոյեմբեր 2011-ին տեղի ունեցան երթ ու դարձի դրութեամբ փլէյ-օֆի մրցումները: Խրուաթիա յաջողեցաւ երեք անպատասխան կոլերով ի դերեւ հանել թուրքերուն երազները: Այիրի կազմը 5-1 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց էսթոնիան: Փորթուգալցիք 6-2 արդիւնքով պարտութեան մատնելով Պոսնիան՝ կասեցուցին անոր ընթացքը: Իսկ չեխերը երեք կոլով չէզոքացուցին Մոնթենեկրոյի կազմը:

«Եուրո 2012»-ի գտումի մրցումներուն նշանակուեցան 665 կոլեր 248 մրցումներու ընթացքին: Գերմանիա եւ Սպանիա եղան այն կազմերը, որոնք իրենց բոլոր մրցումները աւարտեցին յաղթանակներով: Այս երկու կազմերու կողքին, Անգլիա, Իտալիա եւ Յունաստան ոչ մէկ պարտութիւն կրեցին: Անտորա եւ Սան Մարինօ իրենց բոլոր մրցումները աւարտեցին պարտութեամբ: Այս երկուքին կողքին, Կիպրոս եւ Մալթա ոչ մէկ յաղթանակ արձանագրեցին: Առաւելագոյն թիւով կոլեր նշանակող կազմը եղաւ Հոլանտա (37 կոլ), իսկ առաւելագոյն կոլեր ստացող կազմը եղաւ Սան Մարինօ (53 կոլ): Լաւագոյն կոլ-սքորըըըը հանդիսացաւ Քլաս Եան Հիւնթելար՝ 12 կոլով:

ՀԱՅՐԵՆԻ ԿԱԶՄԻՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի ազգային խումբը առաջին անգամ ըլլալով այս մրցաշարին լուրջ մրցակից դարձաւ իր խմբակիցներուն: Նախապէս իր մասնակցութիւնը բերած մրցաշարքերուն ան յոյսեր չէր ունեցած անցնելու յաջորդ հանգրուան, մինչդեռ այս անգամ հայրենի կազմը ո՛չ միայն տպաւորիչ էր որպէս մակարդակ ու որպէս արդիւնքներ, այլեւ՝ միմիայն վերջին մրցումին պարտութիւն մը կրելով ան զրկուեցաւ փլէյ-օֆի մրցումներէն:

Հայաստան իր առաջին մրցումը կատարեց 3 Սեպտեմբեր 2010-ին, Երեւանի մէջ, Այիրի դէմ: Հայրենի մարզիկները ճիշդ է որ պարտուեցան, սակայն դժուար տեղի տուին իրենց մրցակիցին դիմաց: Յաջորդ մրցումը Մակեդոնիոյ դէմ յաղթական էին եւ միմիայն վերջին վայրկեանին փենալթիով կոլ

«ԵՈՒՐՕ 2012»-Ի ԿԵԴՐՈՆԻ ԻՐԱՒԱՐԱՐՆԵՐԸ



Յաուրրոտ Ուէպ Անգլիա



Սթեֆան Լանոյ Ֆրանսա



Վոլֆկանկ Սթար Գերմանիա



Վիքթոր Բասայ Յունգարիա



Նիքոլա Ռիցոլի Իտալիա



Պեդրո Բուիփերո Յուլանտա



Փետրո Փրոնչա Փորթուգալ



Քրեյկ Թոմսըն Սկոտլանդ



Տամիր Սքոմինա Սլովենիա



Ք. Վ. Քարպալո Սպանիա



Եոնաս Էրիքսըն Շուեդ



Գերնեթ Չաքիր Թուրքիա

մը ստանալով հալածանքները արձանագրեցին: Ապա, հայրենի կազմը սկսաւ իր բարեյաջող ելույթներուն եւ դարձաւ խմբակին թեկնածուներէն մէկը:

11 Հոկտեմբեր 2011-ին, Տապլինի մէջ, Հայաստանի ազգային խումբը կը կատարէր վճռորոշ մրցում մը տեղւոյն ազգային խումբին դէմ: Իրլանտացիք պէտք ունէին հալածանքներէն, իսկ հայրենի կազմը պէտք է անպայման յաղթէր, որպէսզի ապահովէր փութ-օֆի իր տոմարը: Մրցումին 26-րդ վայրկեանին սպանացի իրաւարար Կոնգալէս անհասկնալի կարմիր քարտ մը բարձրացուց Հայաստանի բերդապահ Ռոման Պերեզովսքիի դէմ: Հայրենի կազմը մրցումը շարունակեց տասը մարզիկներով: Արդիւնք՝ անոնք պարտուելով հրաժեշտ տուին մրցաշարին:

Այս մրցումի իրաւարարին կարմիր քարտը բաւական մեղացող հոսեցուց: Չանագան մեկնաբանութիւններ եղան: Նախ արձանագրեցին, որ տրուած կարմիր քարտը հարիւր առ հարիւր անարդար էր: Տեսերիզը ցոյց կու տայ, որ բերդապահը իր քառակուսիէն դուրս չէ դպած գնդակին: Ապա, եղան մեկնաբանութիւններ, թէ ԵՈՒ-էֆ-Ա-ն հատուցեց իրլանտացի իր պարտքը: Երկու տարի առաջ իրլանտացիք նման անարդար

րութեան մը զոհ դառնալով զրկուած էին Հարաւային Աֆրիկէի մոնտիալէն: Նման մեկնաբանութիւններ կատարեցին նոյնիսկ օտար մամուլի յարգելի ներկայացուցիչներ:

«ԵՈՒՐՕ 2012»-ի մրցումներու ծիրէն ներս, Հայաստան կատարեց 10 մրցում. յաղթեց 5 խաղ, հալածանքեցաւ 2 մրցում եւ պարտուեցաւ 3 մրցում: Նշանակեց 22 կոլ եւ ստացաւ 10 կոլ: Ան իր խմբակին առաւելագոյն կոլեր նշանակող կազմը եղաւ: Հայրենի կազմին կոլերը նշանակեցին Հենրիխ մխիթարեան՝ 6 կոլ, Գէորգ Ղազարեան՝ 5 կոլ, ԵՈՒՐԱ Մովսիսեան եւ Մարքո Փրիցելլի՝ 4-ական կոլ, Արթիւր Սարգիսով՝ 2 կոլ եւ էտկար Մանուչարեան՝ 1 կոլ: Նշենք նաեւ, որ խմբակին մէջ միայն մեր մարզիկներն էին, որ յաջողեցան երեք կոլէ աւելի նշանակել:

Զտուածի մրցումներէն ետք, հայրենի կազմը շատերու յուշեց, թէ այլեւս անցեալի տկար կազմերէն չէ: Ան կրնայ որեւէ կազմ պարտութեան մատնել եւ այսուհետեւ թեկնածու ներկայանալ իր խմբակին մէջ յառաջիկայ մրցաշարքերուն մասնակցելու համար: Մեր բաղձանքն ու ակնկալութիւնն է, որ մեր մարզիկները շարունակեն իրենց բարձրորակ խաղարկութիւնը, շարունակեն յաղթարշաւը եւ իրենց մասնակցութիւն բերեն ԵՈՒՐՕ-ի կամ մոնտիալի աւարտականներուն:

ԼԵՀԱՍՏԱՆ



Լեհաստանի ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է մէկ անգամ՝ 2008-ին: Կատարած է 3 մրցում: Արձանագրած է 1 հաւասարութիւն եւ 2 պարտութիւն: Նշանակած է 1 կոլ եւ ստացած է 4 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Ֆրանչիսէք Սմոլտա:

Լեհաստանի ազգային խումբը, իբրեւ կազմակերպիչ, զտումի մրցումներու չմասնակցեցաւ: Փոխարէնը ան կատարեց բարեկամական մեծաթիւ մրցումներ, որոնցմէ եօթը մրցում յաղթեց, հինգ հաւասարութիւն եւ երկու պարտութիւն արձանագրեց: Այս մրցումներուն ամէնէն յատկանշականը, անցնող Յունիսին էր, երբ լեհերը Վարշաւիոյ մէջ 2-1 արդիւնքով յաղթեցին Արժանթինի: Մնացեալ յաղթանակները յիշատակելի խումբերու դէմ չէին, իսկ կարգ մը մեծ երկիրներու դէմ մրցելով անոնք կամ պարտուեցան եւ կամ ալ հաւասարեցան:


Լեհերու Եւրոպայի ախոյեանութեան մասին ոչինչ կարելի է ըսել: Անոնք չորս տարի առաջ

առաջին անգամ ըլլալով մասնակցեցան եւ յոսախաբ մեկնեցան իրենց երկիրը: Սակայն, այս մրցաշարին, իբրեւ հիւրընկալ, անոնք պարտաւոր են առնուազն բարձր մակարդակի ֆուտպոլ ցուցադրել եւ տպաւորել իրենց համակիրները եւ, ինչու չէ, պատուաբեր դիրք մը գրաւել:

Մարզիչ Սմոլտա բերդապահի պաշ-

տօնը պիտի վստահի երիտասարդ Լուքաս Ֆապիանսքի: 26 տարեկան Ֆապիանսքի, որ 20 անգամ կրած է ազգային խումբին շապիկը, մաս կազմելով Արսենալի, պիտի փորձէ իր բերդը անառիկ պահել: Զայն փոխարինողներու շարքին է Արսենալի իր խմբակից Ուոսիէք Սզեսնին (21 տարեկան): Երկուքն ալ միջազգային գետնի վրայ այնքան ալ փորձառու չեն: Փոխարինող այլ բերդապահներ են Կրեկորզ Սանտոմիերսքին (22 տարեկան, Ճէնք) եւ Փրզեմիսլաւ Թիթորին (25 տարեկան, ՓՍՎ): Լեհերը ծանօթ եղած են իրենց լաւ բերդապահներով, եւ այս մրցաշարին ալ նոյն խոստումներով պիտի ներկայանան:

Յետսպահ գիծի վրայ լեհերը ունին բաւական գործունեայ մարզիկներ, որոնք մաս կը կազմեն օտար ապուստաններու: Մարսին Վասիլեւսքի (31 տարեկան, Անտրլէխթ), Լուքաս Փիսցէք (26 տարեկան, Պ. Տորթմունտ), Սեպասթիան Պոնիչ (25 տարեկան, Վ. Պրեմըն) եւ Տամիէն Փերքիս (27 տարեկան, Սոչո) պիտի կազմեն կորիզը պաշտպանողականին: Տեղացիներէն Եագուպ Վալրզինիաք (28 տարեկան, Լեկիա Վարշաւ-



Բերդապահ Լուքաս Ֆապիանսքի:



իա), Կրեկոր Վոյթքովիաք (28 տարեկան, Լեխ Փոզնան) պիտի ամբողջացնեն յետսապահ գիծը: Մարզիչ Սմոլտա կրնայ ազգային խումբ հրաւիրել նաեւ վեթերան յետսապահներ 35-ամեայ Միքալ Զելաքովը եւ 33-ամեայ Արքատիոլգ Կլովասքին:

Միջնապահ գիծի պարագային, մարզիչ Սմոլտա նորէն պիտի վստահի «օտարականներուն»: 26-ամեայ խմբապետ Եագոլպ Պլազիքովսքի (Պ. Տորթմունտ), Տարիոլս Տոլտքա (28 տարեկան, Օքսէո), Սլավոմիր Փեզքո (27 տարեկան, Քէօլն), Լոլտովիչ Օպրանիաք (27 տարեկան, Պորտո), Ատրիան Միերգեյեւսքի (25 տարեկան, Տրապիզոն-

սփոր) եւ Էօկէն Փոլանսքի (25 տարեկան, Մայնց) պիտի իրագործեն մարզիչ Սմոլտայի «ծրագիրները» դաշտին վրայ:

Յառաջապահ գիծի հիմնական մարզիկները պիտի ըլլան Փաւէլ Պրոցէք (28 տարեկան, Սելթիք), Ռոպերթ Լեւանտովսքի (23 տարեկան, Պ. Տորթմունտ), Իրենէոս Ժելերի (30 տարեկան, Լիլ) եւ Քամիլ Կրոզիսքի (23 տարեկան, Սվազսփոր): Այս մարզիկներուն կողքին կան երիտասարդներ, որոնք մաս կը կազմեն տեղական ակումբներու: Միքալ Քուչարսիք (20 տարեկան, Լեկիա Վարշաիա), Փաթրիք Մալեքի (23 տարեկան, Ուիսլա Քրաքով) կրնան կատարել փոխարինողի դեր:

«Եուրօ 2012»-ի ծիրէն ներս լեհերը խմբակից ունին Ռուսիան, Յունաստանը եւ Չեխիան: Լեհաստան ինք պիտի կատարէ մրցաշարքի բացման մրցումը Յունաստանի դէմ, Յունիս 8-ին: Յաջորդ մրցումին լեհերը պիտի մրցին Ռուսիոյ դէմ, ապա չորս օր ետք պիտի հիւրընկալեն Չեխիան:

Հակառակ այն իրողութեան, որ Լեհաստանի ազգային խումբի մարզիկներուն մեծամասնութիւնը մաս կը կազմէ օտար ակումբներու, սակայն այդ մարզիկներուն մէջ չկան անուանի խաղացողներ, իսկ ազգային խումբին արդիւնքները այնքան ալ քաջալերական չեն: Հաւանաբար բարեբախտութիւն է լեհերուն, որ մաս կը կազմեն նման խմբակի մը, ուր մեծ երկիրներու բացակայութիւնը առիթ պիտի տայ իրենց, որ ներկայանան իբրեւ հիւրընկալ-թեկնածու: Օգտուելով դաշտի առաւելութենէն եւ քաջալերուելով տեղի համակիրներէն, լեհերը պիտի փորձեն այս Եուրոյի ընթացքին անպայման իրագործում մը կատարել: Շատերու յիշողութեան մէջ տակաւին թարմ են Լաթոներու, Պոնիէքներու ու Զարմախներու սխրագործութիւնները 1970-ական թուականներուն: Մարզիչ Սմոլտա գիտակից է այս իրականութեան, սակայն նաեւ գիտէ, որ իր կազմը կարողութիւններով շատ համեստ է այդ սերունդի կազմէն եւ նուազագոյն յաջողութիւնը պէտք է գնահատել ըստ արժանւոյն:



ՅՈՒՆԱՍՏԱՆ



Յունաստանի ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է երեք անգամ. 2004-ին հանդիսացած է ախոյեան: Կատարած է 12 մրցում: Արձանագրած է 4 յաղթանակ, 2 հաւասարութիւն եւ 6 պարտութիւն: Նշանակած է 9 կոլ եւ ստացած է 13 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է փորթուգալցի Ֆեռնանտո Սանթոս:

«Եուրո 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Յունաստանի ազգային խումբը 2 խմբակին մէջ գտնուելով, կատարեց 10 մրցում, արձանագրելով 7 յաղթանակ եւ 3 հաւասարութիւն: Նշանակեց 14 կոլ եւ ստացաւ 5 կոլ: Ան գրաւեց խմբակին Ա. դիրքը եւ հասաւ «Եուրո 2012»-ի աւարտական հանգրուանին:

Անկասկած, բոլոր ֆուտպոլասէրներու յիշողութեան մէջ տակաւին թարմ է 2004-ին Յունաստանի ֆուտպոլի խումբին ստեղծած մեծագոյն անակնկալը, երբ բազմաթիւ թեկնածու խումբերու ներկայութեան, անոնք աւարտականին Փորթուգալի կազմը պարտութեան մատնելով՝ շահեցան տիտղոսը: Հաւանաբար այս մէկը կը մնայ ֆուտպոլի պատմութեան մեծագոյն անակնկալներէն մէկը, եթէ ոչ՝ մեծագոյնը: Այդ թուականէն առաջ ու ետք, յունական ֆուտպոլը առհասարակ, եւ մասնաւորաբար ազգային խումբը, յաջողութիւններ չէ արձանագրած: Այս տարի ալ անոնք մեծ խոստումներ չունին:

Մարզիչ Սանթոսի տրամադրութեան տակ կան քանի մը բերդապահներ: Ալեքսանտրոս Յովրաս (29 տարեկան, Փալերմօ), Սթեֆանոս Քացոլիս (32 տարեկան, Փանաթինայքոս), Քոսթաս Չալքիաս (37 տարեկան, Փառք) եւ Միխայիլ Սիֆաքիս (27 տարեկան, Արիս Սալոնիք): Այս բերդապահները փորձառու են եւ յաճախ պաշտպանած են իրենց ազգային խումբին բերդը: Բնականաբար, ամէնէն վստահելին Քոսթաս Չալքիասն է, որ տարիներէ ի վեր մաս կը կազմէ հաւաքականին:

Յետապահ գիծի հիմնական մարզիկները երիտասարդ են ու փորձառու: Վասիլիս Թորոսիտիս (26 տարեկան, Օլիմփիաքոս), Աւրամ Փափատոփոլոս (27 տարեկան, Օլիմփիաքոս), Նիքոս Սփիրոփոլոս (28 տարեկան, Փանաթինայքոս), Լուքաս Վինթրա (31 տարեկան, Փանաթինայքոս), Սոքրատիս Փափատթաթոփոլոս (23 տարեկան, Վ. Պրեմըն), Ճիանիս Մանիաթիս (25 տարեկան, Օլիմփիաքոս) եւ երիտասարդ Քիրիաքոս Փափատափոլոս (20 տարեկան, Շալքէ), որ ապագայ խոստացող մարզիկ մըն է: Այս մարզիկները կը հանդիսանան Յունաստանի ազգային խումբի պաշտպանողականին կորիզը:

Միջնապահ գիծի եւ ընդհանրապէս ազգային խումբի ամէնէն փորձառու մարզիկը կը հանդիսանայ Ճիորճոս Քարակունիս (35 տարեկան, Փանաթինայքոս): 115 անգամ ազգային խումբին շապիկը կրած, ան կրնայ իր երկրին մրցանիշը կտրել՝ միջազգային մրցումներ կատարելու թիւով: Նախապէս Պենֆիքայի եւ ինթէրի շապիկը կրած այս մարզիկը, հակառակ իր յառաջացած տարիքին, կը մնայ խումբին «տիամօն»: Անոր կողքին է Փանաթինայքոսի իր խմբակից 32-ամեայ Քոսթաս Քացուրանիսը: Միջնապահ գիծը կրնան ամբողջացնել Փանթելիս Քաֆէս (33 տարեկան, ԱէՔ), Սոթիրիս Նինիս (21 տարեկան, Փանաթինայքոս) եւ Ալեքսանտրոս Յիոլիս (27 տարեկան, Մոնաքօ): Փոխարինողներ կրնան ըլլալ Փանակոթիս Լակոս (26 տարեկան, ԱէՔ), Կրիկորիս Մաքոս (25 տարեկան, ԱէՔ) եւ Ճիանիս Ֆեթֆացիտիս (21 տարեկան, Օլիմփիաքոս):

Յառաջապահ գիծի վրայ տակաւին «գործունեայ» են տարեց յոյները: Նի-



Քոսթաս Չալքիաս:

քոս Լիպերոփուլոս (36 տարեկան, ԱԷՔ), Թէոֆանիս Ճէքաս (31 տարեկան, Սամսոնսփոր), Տիմիթրիս Սալբիկիտիս (30 տարեկան, Փառք) պիտի կազմեն յառաջապահ գիծին առանցքը: Դժբախտաբար, փոխարինողները այնքան ալ երիտասարդ չեն: Ճիորճոս Սամարաս (27 տարեկան, Սելթիք), Անխելոս Քարիսթէաս (32 տարեկան, Փանեթոլիքոս) եւ Ճիորճոս Ճորճիատիս (24 տարեկան, Փառք):


Յոյները նախկին իրենց մասնակցութիւններէն միայն 2004-ին կարողացան յաջողիլ եւ բոլոր նախատեսութիւնները գլխիվայր շրջելով, հակառակ մեծերուներկայութեան, ախոյեան հանդիսացան: Այս մրցաշարքի գտումի մրցումներուն անոնք արձանագրեցին դրական արդիւնքներ: Ճիշդ է, որ իրենց խմբակին մէջ Ֆուլթպոլի «մեծ» երկիր մը չկար, այսուհանդերձ, յոյները ոչ մէկ պարտութիւն կրեցին իրենց կատարած գտումի մրցումներուն:

Յունիս 8-ին «Եուրո 2012»-ի իրենց առաջին մրցումը անոնք պիտի կատարեն



րեն կազմակերպիչ Լեհաստանի դէմ: Այս խմբակին մէջ «հօր» կազմի մը բացակայութիւնը պատճառ պիտի ըլլայ որ բոլոր խումբերը իրենց «ախորժակները» լայն բանան: Երկրորդ մրցումը Չեխիոյ դէմ պիտի ըլլայ վճռական, որմէ ետք յոյները պիտի մրցին ռուսերուն դէմ:

2004-ի յաջողութենէն ետք, Յունաստանի համակիրները շատ կը փափաքին իրենց խումբը վերստին տեսնել բարձունքներու վրայ: Յունաստանի Ֆուլթպոլի ազգային խումբը այդ մէկը չի յուշեր, բայց Ֆուլթպոլի աշխարհին մէջ անկարելի բան չկայ...



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabadoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

Reservations

www.europehotel.am

ՌՌԲՄԻԱ



Լոր առևթասյտրը մը: Ռուսական ֆուլթպոլի պատմութիւնը ցոյց կու տայ, թէ ան ի վիճակի է նման ախոյեանութիւններու համար դառնալ մեծ յաւակնորդ:

Հոլանտացի մարզիչ Ատվոքաաթ իր տրամադրութեան տակ ունի մարզիկներու խումբ մը, որ մասնակցած է չորս տարի առաջ տեղի ունեցած Եւրոպայի ախոյեանութեան: 31-ամեայ բերդապահ Սերկէյ Ռիթիքով եւ 33-ամեայ վիաչեսլաւ Մալաֆէեւ լաւապէս կրնան պաշտպանել ռուսական բերդը մրցակից կազմերու յարձակումներուն դէմ: Վերոնշեալ մարզիկները մաս կը կազմեն Սէ.էս.Քա. Մոսկուայի եւ Ջենիթ ֆեթերսպուրկի: Այս երկուքին փոխարինողներ կրնան ըլլալ Վլատիմիր Կապուլով (28 տարեկան, Անժի Մախաչքալա) եւ Անտոն Շունին (25 տարեկան, Տինամո Մոսկուա): Ռուսերը ոչ մէկ ատեն բերդապահի դժուարութիւն չեն ունեցած: Անոնք ֆուլթպոլի աշխարհին ծանօթ են իրենց աշխարհահռչակ բերդապահներով:

Ռուսիոյ ազգային խումբի յետապահները բաւական փորձառութիւն ձեռք ձգած մարզիկներու խումբ մըն

Ռուսիոյ ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է ինը անգամ: 1960-ին հանդիսացած է ախոյեան: 1964-ին, 1972-ին եւ 1988-ին գրաւած է երկրորդ դիրքը: 2008-ին հանդիսացած է երրորդ, իսկ 1968-ին հանդիսացած է չորրորդ: Կատարած է 27 մրցում: Արձանագրած է 11 յաղթանակ, 5 հաւասարութիւն եւ 11 պարտութիւն: Նշանակած է 31 կոլ եւ ստացած է 36 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Տիք Ատվոքաաթ:

«Եւրո 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Ռուսիոյ ազգային խումբը Բ. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 10 մրցում, արձանագրելով 7 յաղթանակ, 2 հաւասարութիւն եւ 1 պարտութիւն: Նշանակեց 17 կոլ եւ ստացաւ 4 կոլ: Ան գրաւեց խմբակին Ա. դիրքը եւ հասաւ «Եւրո 2012»-ի աւարտական հանգրուանին:

Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, տասնամեակ մը պէտք եղաւ, որպէսզի ռուսական ֆուլթպոլը ինքնահաստատման հանգրուան մը ապրի: Այ-

սօր արդէն ռուսական ֆուլթպոլը ինքզինք հաստատած է: Ռուսական ակումբները եւրոպական մրցաշարքերուն դժուար մրցակիցներ են, երբեմն տիտղոսակիրներ, իսկ ազգային հաւաքականը գրեթէ միշտ ներկայ է միջազգային մրցաշարքերուն եւ յամառ պայքարող կազմ մըն է: Ճիշդ է, որ ան տակաւին նկատի չառնուիր իբրեւ գլխաւոր թեկնածու, սակայն կը մնայ զօրա-



Մարզիչ Տիք Ատվոքաաթ:

են: Սէ.էս.Քա Մոսկուայի գոյգ եղբայրները՝ Ալեքսէյ եւ Վասիլի Պերեգոլցքի (29 տարեկան), Ալեքսանտր Անիուքով (29 տարեկան, Ձենիթ), Սերկէյ Իկնաշելիչ (32 տարեկան, Սէ.էս.Քա. Մոսկուա), Ռոման Շիչքին (25 տարեկան, Լոքոմոթիւ Մոսկուա) եւ Եուրի ժիրքով (28 տարեկան, Անժի Մախաչքալա): Այս բոլորն ալ տարիներէ ի վեր կը կրեն ազգային խումբին շապիկը եւ վերջին Եուրոյի խաղերուն յաջողեցան խումբը հասցնել մինչեւ կիսաւարտական, իսկ գտումի մրցումներուն անոնք ունեցան յաջող խաղարկութիւն: Սակայն, պէտք է նշել, որ մարզիչ Ատվոքաաթ տակաւին երիտասարդներ չէ ներառնած պաշտպանողականին մէջ:

Միջնապահ գիծը նոյնպէս բաւական փորձառու է: Սակայն հոն կան արդէն «ծերացած» ֆուլթպոլիստներ: Մարզիչ Ատվոքաաթ պիտի վստահի՞ Կոստանդին ժիրիանովի (34 տարեկան, Ձենիթ) եւ Իկոր Շեմչովի (33 տարեկան, Տինամո Մոսկուա): Այս երկուքէն բացի հիմնական մարզիկներ են Ռոման Շիրոքով (30 տարեկան, Ձենիթ), Իկոր Տենիսով (27 տարեկան, Ձենիթ), Տինիար Պիլիալետինով (27 տարեկան, Սպարտակ Մոսկուա), Վլատիմիր Պիսթրով (28 տարեկան, Ձենիթ) եւ Տիմիթրի Թորպինսքի (27 տարեկան, Լոքոմոթիւ Մոսկուա):

Յառաջապահ գիծի եւ ընդհանրապէս ռուսական ֆուլթպոլի վերջին տարիներու աստղը կը հանդիսանայ Անտրէ Արչաւին (30 տարեկան, Ձենիթ): Չորս տարի առաջ, Եւրոպայի ախոյեանութեան, ան լուսարձակները կեդրոնացուց իր վրայ: Բացառիկ տրիպլէօր եւ արագաշարժ, Արչաւին թէ՛ կոլեր նշանակող է եւ թէ՛ կոլի առիթներ ստեղծող իր ընկերներուն: Անոր «գործընկերն» է նոյնպէս վտանգաւոր յառաջապահ Ռոման Փաւլիչենքօ (30 տարեկան, Լոքոմոթիւ Մոսկուա): Վտանգաւոր եւ փորձառու յառաջապահներ են նաեւ Ալեքսանտր Քերժաքով (29 տարեկան, Ձենիթ) եւ Փաւլի Փոկրեպնեաք (28 տարե-



Անտրէ Արչաւին:

կան, Ֆուլհէմ): Ռուսիոյ ազգային խումբ կրնան հրաւիրուիլ նաեւ երիտասարդ յառաջապահներ, որոնցմէ նշենք Ալեքսանտր Քոքորինը (20 տարեկան, Տիամո Մոսկուա):

Ռուսիոյ ազգային խումբը մեծ ակընկալութիւններով պիտի չմեկնի Ուքրանիա-Լեհաստան: Անոնք առնուազն խմբակին մէջ պիտի չօգտուին դաշտի գործօնէն, որովհետեւ իրենց մրցումները տեղի պիտի ունենան Լեհաստանի մէջ: Ռուսիոյ կազմը փորձառու խաղացողներէ կազմուած ըլլալով, կը մնայ մրցաշարքին մեծագոյն առթսայտրներէն մէկը: Անոնք գտնուելով համե-

մատաբար ամէնէն թոյլ խմբակին մէջ, պիտի փորձեն առնուազն ապահովել Բահանգրուանի իրենց տոմսը: Իրենց առաջին մրցումին ռուսերը պիտի մրցին Չեխիոյ դէմ, որ նոյնպէս պիտի ձգտի երեք կէտ ապահովել՝ չվտանգուելու համար: Ռուսիոյ երկրորդ մրցումը ճակատագրական է, կազմակերպիչ Լեհաստանի դէմ: Եթէ անոնք առաջին մրցումին պարտուին, ապա անոնց «գործերը» այնքան յաջող պիտի չընթանան: Երրորդ մրցումը յոյներուն դէմ կրնայ վճռորոշ ըլլալ Ռուսիոյ համար, մանաւանդ եթէ առաջին մրցումին անոնք յաղթանակ մը ապահոված չըլ-

լան: Մարզիչ Տիք Ատվոքաաթ, ի մի խմբելով երիտասարդ ու վեթերան ֆուլթպոլիստներ, պաշտպանողական իր ծանօթ ոճով, ռուսերուն համար կրնայ բաւական յաջողութիւններ արձանագրել: Ռուսերը իրենց կարգին պիտի փորձեն վերականգնել անցեալի իրենց փառքը, եւ ցոյց տալ բոլորին, թէ իրենք արժանի յաջորդներն են Եւրոպայի առաջին ախոյեանութիւնը նուաճած Խորհրդային Միութեան փառաւոր սերունդին:



ՉԵԽԻԱ



Մարզիչ Պիլչեք յետսապահ գիծը պիտի վստահի Միքայլ Քատլչեքի (27 տարեկան, Պ. Լեերքոլզըն), Տանիէլ Փիլտիլի (26 տարեկան, Սեգենա), Ռոման Հիւպնիքի (27 տարեկան, Հերթա Պերլին) եւ Թոմաս Սիվոքի (28 տարեկան, Պեշիկթաշ): Այս չորսին մէջ ամէնէն վստահելին ու կատարեալը բնականաբար Քատլչեքն է: Ան պիտի ղեկավարէ ու հսկէ Չեխիոյ պաշտպանողական գիծը: Անոր պիտի վստահուի կասեցնել մրցակիցներուն յարձակումները: Այս քառեակին որպէս պաշտպաններ կրնան միանալ Զտենէք Փոսփէքը (33 տարեկան, Մայնց 05), Եան Ռայնոք (30 տարեկան, Սիվասփոր) եւ Տէյվիտ Լիմպերսքի (28 տարեկան, Վիքթորիա Փիզէն): Պահեստի մարզիկներէն ամէնէն վստահելին Փոսփէքն է, որ կրնայ որեւէ մէկուն բացը գոցել: Մինչ մնացեալ մարզիկները համեմատաբար անփորձ են ու կրնան լաւ չկատարել իրենց պարտականութիւնը:

Կեդրոնի հսկողութիւնը պիտի վստահուի ազգային խումբի լաւագոյն խաղացողներէն Թոմաս Ռոզիսքիի (31 տարեկան, Արսենալ): Ան 85 անգամ կրած է ազգային խումբին շապիկը: Անոր կողքին է նոյնքան փորձառու Եարոսլաւ Փլազիլը (30 տարեկան, Պորտո): Այս երկուքին ուսերուն պիտի իյնայ խումբին ղեկավարումը. թէ՛ յարձակումներ կազմակերպել եւ թէ՛ օգնել պաշտպաններուն: Այս երկուքին պիտի օգնէ Թոմաս Հուպչմէնը (30 տարեկան, Շախթիոր), Եան Փոլաքը (30 տարեկան, Վոլսպոլրկ) եւ Փեթր Եիրաչէքը (26 տարեկան, Վոլսպոլրկ): Չեխերը ունին երիտասարդ միջնապահներու փաղանգ մը եւս, որոնք կրնան վերոնշեալ խաղացողներէն որեւէ մէկուն բացակայութիւնը գոցել: Քամիլ Վաչէք (24 տարեկան, Քիեւօ), Մարսէլ Կեչոլ (24 տարեկան, Ֆուլհէմ), Փեթր Եանտա (25 տարեկան, Սլաւիա Փրակա) եւ Եան Մորա-

Չեխիոյ ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է վերջին չորս մրցաշարքերուն. 1996-ին ան հանդիսացած է երկրորդ, իսկ 2004-ին՝ չորրորդ: Կատարած է 25 մրցում: Արձանագրած է 11 յաղթանակ, 5 հաւասարութիւն, 9 պարտութիւն: Նշանակած է 36 կոլ եւ ստացած է 32 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Միքայլ Պիլչեք:

«Եուրօ 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Չեխիոյ ազգային խումբը Թ. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 8 մրցում, արձանագրելով 4 յաղթանակ, 1 հաւասարութիւն եւ 3 պարտութիւն: Նշանակեց 12 կոլ եւ ստացաւ 8 կոլ: Ան գրաւեց խմբակին Բ. դիրքը: Երկրորդ դիրքը գրաւելով ան իրաւունք ստացաւ մրցելու փլէյ-օֆի մրցումներուն: Երթ ու դարձի դրութեամբ մրցեցաւ Մոնթենեկրոյի դէմ, 1-0 եւ 2-0 արդիւնքով յաղթելով հասաւ «Եուրօ 2012»-ի աւարտական հանգրուանին:

Չեխիա ծանօթ անուն մըն է ֆուլթպոլի աշխարհին մէջ: Չեխերը բոլոր այն


մրցաշարքերուն, որոնց մասնակցած են, յաջող արդիւնքներ արձանագրած են կամ առնուազն տպաւորած են ֆուլթպոլասէր հանրութիւնը: Անշուշտ, Չեխիոյ այսօրուան կազմը կը տարբերի տասնամեակի մը առաջուան կազմէն, երբ Նետվետ, Պարոս եւ ընկերները ահ ու սարսափն էին մրցակից կազմերուն: Այդ կազմէն քիչեր մնացած են այսօր: Մարզիչ Պիլչեք կազմին միացուցած է երիտասարդներ, որոնք տոկուն եւ բարձրորակ ֆուլթպոլիստներ են:

Բերդապահութեան առաջին եւ գլխաւոր թեկնածուն բնականաբար փորձառու Փեթրը Չեխն է: Չեխիի մաս կազմող 29 տարեկան այս մարզիկը, որ 89 անգամ կրած է ազգային խումբին շապիկը, վստահութիւն կը ներշնչէ իր ընկերներուն: Ինքնավստահ, ճիշդ հաշուարկող եւ արագ հակադարձութեան տէր, ան միշտ ալ կը զայրացնէ մրցակից կազմի յառաջապահներն ու միջնապահները: Զայն կրնայ փոխարինել Համպոլրկի փորձառու բերդապահ 32-ամեայ Եարոսլաւ Տրոպնին: Երրորդ բերդապահ կրնայ նկատի առնուիլ Սփարթա Փրակայի երիտասարդ մարզիկ, 22 տարեկան Թոմաս Վաչիքը:

վէք (24 տարեկան, Օկսպուրկ):

Յառաջապահ գիծի եւ ազգային խումբի ամէնէն հուշակալոր մարզիկը կը մնայ յառաջապահ Միլան Պարոսը: Երեսնամեայ այս մարզիկը, որ արդէն 87 անգամ կրած է ազգային խումբին շապիկը, այս տարագով նշանակած է 40 միջազգային կոլ: Ան Եան Քէօլլրի ետին Չեխիոյ երկրորդ լաւագոյն կոլ-սքորրըն է: Չեխ Փոլթպոլասէր հասարակութեան յոյսն է ան: Իր կողքին պիտի ունենայ «ծերացած» Եիրի Մնայտըրը: 35-ամեայ այս մարզիկը կրնայ կանչուիլ պաշտօնի եւ օգնել Պարոսին: Երրորդ յառաջապահն է երիտասարդ Թոմաս Նեսիտը (22 տարեկան, Սէ. Էս. Քա. Մոսկուա), որ նոյնպէս կոլեր նշանակող մարզիկ մըն է: Երիտասարդ յառաջապահներէն կրնան նկատի առնուիլ Վաչլաւ Քատլէքը (19 տարեկան, Սփարթա Փրակա), Լիպոր Քոզաքը (22 տարեկան, Լացիօ) եւ Թոմաս Փեխարթը (22 տարեկան, Նիւրեմպըրկ):

Ահալասիկ, նման կազմով մը չեխերը պիտի մեկնին Լեհաստան-Ուքրանիա:



Եթէ նայինք պատմութեան, ապա պիտի նկատենք, որ անոնք միշտ ալ դրական արդիւնքներ տուած են Եուրոյի մրցաշարքերուն, մինչեւ իսկ ախոյեան հանդիսացած են, Չեխոսլաւաքիոյ գոյութեան օրերուն: Այսօր Չեխիոյ Փոլթպոլի պատկերը քիչ մը կը տարբերի: Անոնք չունին այն փայլուն խաղացողները, որոնք ունէին տասնամեակ մը առաջ: Ճիշդ է, որ անոնք չեն գտնուիր դժուար

խմբակի մը մէջ, բայց նախ եւ առաջ մրցակից ունին կազմակերպիչ Լեհաստանը, որ պիտի փորձէ Եուրոյի մեծ դռներն ներս մտնել եւ իր անունը արձանագրել տիտղոսակիրներու ցանկին վրայ: Ռուսերը ունին բաւական տոկոս կազմ, եւ նախորդ Եուրոյի նման կրնան յիշեցնել իրենց փառքի օրերը: Յունաստան կը մնայ խմբակին ամէնէն «համեստ» կազմը: Յոյներու մասնակցութիւնը այնքան անակնկալ չէր, որքան՝ իրենց խմբակին առաջին դիրքը գրաւելը: Հետեւաբար, յոյները եւս մեծ ակնկալութիւններով պիտի մեկնին Լեհաստան: Չեխերը իրենց առաջին մըրցումը պիտի կատարեն ռուսերուն դէմ, որմէ ետք կը մրցին յոյներուն դէմ: Անոնց մրցաշարքի մասնակցութեան ճակատագիրը կապուած է առաջին երկու մրցումներուն: Եթէ առաջին երկու մրցումներուն անոնք չապահովեն անհրաժեշտ կէտերը, ապա կանուխէն պիտի ապահովեն տուն վերադարձի իրենց տոմսերը:



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

ՀՈՒԱՆՏԱ



Հոլանտայի ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է ութը անգամ. 1988-ին հանդիսացած է ախոյեան: 1976-ին, 1992-ին եւ 2000-ին գրաւած է երրորդ դիրքը, իսկ 2004-ին հանդիսացած է չորրորդ: Կատարած է 32 մրցում: Արձանագրած է 17 յաղթանակ, 8 հաւասարութիւն եւ 7 պարտութիւն: Նշանակած է 55 կոլ եւ ստացած է 32 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Պերթ Վան Մարվիք:

«Եուրո 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Հոլանտայի ազգային խումբը Ե. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 10 մրցում, արձանագրելով 9 յաղթանակ եւ 1 պարտութիւն: Նշանակեց 37 կոլ եւ ստացաւ 8 կոլ: Ան գրաւեց խմբակին Ա. դիրքը եւ հասաւ «Եուրո 2012»-ի աւարտական հանգրուանին:

Հոլանտայի ազգային խումբը միշտ ալ յաջողութիւններ արձանագրած է Եւրոպայի ախոյեանութիւններուն իր մասնակցութեան ընթացքին: Բնականաբար, ախոյեանութեան տիրացած

տարին պսակումն է անոր յաջողութիւններուն: Այս մրցաշարքին հոլանտացիք դարձեալ կը ներկայանան եթէ ոչ իբրեւ գլխաւոր թեկնածու, ապա իբրեւ մեծ յաւակնորդ բաժակին տիրանալու կամ առաջին քառեակին մէջ պատւաբեր դիրք մը գրաւելու:

Մարզիչ Վան Մարվիք անգամ մը եւս բերդապահութիւնը պիտի վստահի 29-

ամեայ Մաարթէն Սթեքելենպուրկի (Ռոմա): Ան ազգային խումբին հետ կատարած է 45 մրցում: Ճիշդ է, որ ան բացառիկ յատկանիշներու տէր բերդապահ մը չէ, սակայն կը մնայ վստահելի խաղացող մը իր յետսապահ ընկերներուն համար: Զայն կրնան փոխարինել Միշէլ Վորմ (28 տարեկան, Սուանսի Սիթի), Թիմ Բրուլ (23 տարեկան, Նիւքէսը) եւ Եասփըր Սիլեսըն (22 տարեկան, Այաքս):

Յետսապահ գիծը մեծ փոփոխութիւններ չէ կրած վերջին մոնտիալէն ասդին: Հիմնական մարզիկները տակաւին ներկայ են եւ աւելի փորձառութիւն ձեռք ձգած պիտի պաշտպանեն իրենց բերդը: Ճոն Հեթինկա (28 տարեկան, էվըրթըն), Եորիս Մաթիսըն (31 տարեկան, Մալալա), Խալէտ Պելհարուզ (30 տարեկան, Շթուլթկարթ) կը հանդիսանան պաշտպանողականին «սիրտը»: Նորեկներ են Հետուիկ Մատուրո (27 տարեկան, Վալենսիա), Ռոն Վլաար (27 տարեկան, Ֆէյնսուրտ) եւ երիտասարդներ էրիք Փիթերզ (23 տարեկան, Այնտհովըն) եւ Ճէֆրի Պրումա (20 տարեկան, Համպուրկ):



Ճոն Հեթինկա:

Միջնապահ գիծը մարզիչին աւելի վստահութիւն կը ներշնչէ: Հոն գլխաւոր դերակատարներ պիտի ըլլան անգամ մը եւս Ա.Սէ. Միլանի 34-ամեայ Մարք Վան Պոմէլը եւ Ինթէլ Միլանի 27-ամեայ Ուէսլի Շնայտըրը: Այս վերջինը ազգային խումբին հետ աւելի յաջողած է քան ակմբային խաղերուն: Պոմէլ խաղ դեկավարող է, իսկ Շնայտըր ոչ միայն յառաջապահներուն օգնող, այլեւ՝ կոլ նշանակող է: Միջնապահներէն Տէմի Տը Զէօյ կրնայ նաեւ կատարել ծայրի յետասպահի դեր: Իսկ Նայճըլ Տը Եոնկ (27 տարեկան, Մ. Սիթի), Ռաֆայէլ Վան Տէր Վաարդ (29 տարեկան, Թոթենհամ), Իպրահիմ Աֆելայ (25 տարեկան, Պարսելոնա) կրնան ամբողջացնել հիմնական կազմը: Փոխարինողներ կրնան ըլլալ Շթայն Շաարս (28 տարեկան, Սփորթինկ Լիգայոն), Ճորճինիօ Ուինալտոմ (21 տարեկան, Այնտհովըն), Գեւըն Սթրոլթմէն (22 տարեկան, Այնտհովըն) եւ Ուրպի Էմանուէլսըն (25 տարեկան, Ա.Սէ. Միլան): Բնականաբար, միջնապահ գիծի հիմնական խաղացողներէն կը մնայ Պ. Միլնիխի 28-ամեայ Արիէն Ռոպէնը, որուն գլխաւոր պարտականութիւնը յառաջապահներուն գնդակ «մատակարարելն» է: Ան լաւագոյնս կը կատարէ իր «գործը» եւ աւելին՝ կը նշանակէ նաեւ գեղեցիկ կոլեր:

Յառաջապահ գիծի վրայ հոլանտացիք դժուարութիւն չունին: Անոնք միշտ ալ ունեցած են բացառիկ կարողութիւններու տէր յառաջապահներ: Ճիշդ է, որ այսօրուան կազմին մէջ չկան Քրոլյֆի, Վան Պասթընի կամ Պերկքամփի նման յառաջապահներ, սակայն ներկայ կազմին յառաջապահ գիծը բաւական արդիւնաւէտ է: Փաստօրէն, հոլանտացիք գտումի խաղերուն առաւելագոյն կոլեր նշանակող կազմը հանդիսացան:

Յառաջապահ գիծի հիմնական ետեակը կրնան կազմել Տըրք Քոյթ (31 տարեկան, Լիվըրփուլ), Ռոպին Վան Փերսի (28 տարեկան, Արսենալ) եւ Քրաս Եան Հիւնթելար (28 տարեկան, Ա.Սէ. Միլան): Վերջին երկուքը կոլի «որսորդներ» են, մինչ առաջինը աշխատասէր ու գնդակ հաւաքող է: Այլ յառաջապահ մըն է Ռայըն Պապլը (25 տարեկան, Հոֆենհայմ): Կը խօսուի նոյնիսկ վեթերան



Արիէն Ռոպէն:

յառաջապահ Ռուտ Վան Նիսթըրլոյի (35 տարեկան, Մալակա) վերադարձին մասին: Հակառակ իր տարիքին, Նիսթըրլոյ տակաւին կոլեր կը նշանակէ ու կրնայ օգտակար ըլլալ իր ընկերներուն: Երիտասարդ յառաջապահներէն է Էլիբերօ Էլիան (25 տարեկան, Եոլվենթուս), որ ձախ յառաջապահ է, ինչպէս նաեւ Թվենթէի գոյգը՝ 21-ամեայ Լուք Տը Եոնկը եւ 19-ամեայ Օլա Եոնը: Վերջին երկուքը տակաւին ազգային խումբին չափիկը չեն կրած, բայց կրնան նկատի առնուիլ մարզիչ Վան Մարվիքի կողմէ:

Հոլանտացիք, հակառակ աշխարհի ախոյեանութեան, որուն աւարտականին հասած են երեք անգամ, մէկ անգամ միայն տիրացած են Եւրոպայի ախոյեանութեան, շուրջ 25 տարի



առաջ, երբ Հոլանտայի երկրորդ «ոսկեայ» սերունդը յաջողեցաւ բարձրացնել բաժակը: Այդ թուականէն ետք անոնք երեք անգամ հասան կիսաւարտական, սակայն ձախողեցան: Այսօր, սակայն, հոլանտացիք կը նկատուին Եւրոպայի լաւագոյն կազմերէն մէկը: Անոնք գլխաւոր թեկնածուներէն մէկն են բաժակին տիրանալու: Անոնք ոչ մէկ դժուարութիւն ունեցան գտումի մրցումներուն: Յունիս 9-ին, անոնք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն Դանիոյ դէմ: Այս մրցումը կրկնութիւնը պիտի ըլլայ երկու տարի առաջ, ափրիկեան մոնտիալին, երկու կազմերուն միջեւ տեղի ունեցած առաջին մրցումին: Հոս անգամ մը եւս առաւելութիւնը հոլանտացիներուն է: Չորս օր ետք անոնք պիտի մրցին իրենց «ոխերիմ» թշնամիին՝ Գերմանիոյ դէմ: Եւրոպայի ախոյեանութիւններու ընթացքին կատարուած մրցումներուն արդիւնքները գրեթէ միշտ եղած են ի նպաստ հոլանտացիներուն: Սակայն գերմանացիք եւս թեկնածու են եւ պիտի փորձեն իրենց ճամբէն հեռացնել Հոլանտան: Երրորդ մրցումին հոլանտացիք պիտի փորձեն յաղթել փորթուգալցիներուն, որոնք զիրենք հեռացուցին 2004-ի կիսաւարտականէն եւ 2006-ի մոնտիալի երկրորդ հանգրուանէն: Անոնք պիտի փորձեն այդ երկու մրցումներուն «վրէժը» լուծել: Այլ խօսքով, բոլոր տուեալները ցոյց կու տան, թէ հոլանտական ճամբորդութիւնը քիչ մը պիտի երկարի «Եուրօ 2012»-ի մրցումներուն:

ԴԱՆԻԱ



Թոմաս Արեմսը:

Դանիոյ ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է եօթը անգամ. 1992-ին հանդիսացած է ախոյեան, 1964-ին հանդիսացած է չորրորդ, իսկ 1984-ին՝ երրորդ: Կատարած է 24 մրցում: Արձանագրած է 6 յաղթանակ, 6 հաւասարութիւն եւ 12 պարտութիւն: Նշանակած է 26 կոլ եւ ստացած է 38 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Մորթըն Օլսըն:

«Եւրո 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Դանիոյ ազգային խումբը Լ. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 8 մրցում, արձանագրելով 6 յաղթանակ, 1 հաւասարութիւն եւ 1 պարտութիւն: Նշանակեց 15 կոլ եւ ստացաւ 6 կոլ: Ան գրաւեց խմբակին Ա. դիրքը եւ հասաւ «Եւրո 2012»-ի աւարտական հանգրուանին:

Դանիացիք միշտ ալ համեստ ակնկալութիւններով մասնակցած են մրցաշարքերու, սակայն մեծ տպաւորութիւն ձգելով ու լաւ արդիւնքներով հեռացած են անոնցմէ: 1984-ին ոչ ոք կ'ակնկալէր

որ անոնք պիտի հասնէին կիսաւարտական: Իսկ 1992-ին անոնք փոխարինեցին պատժուած Եւրոպայի եւ ո'չ միայն մասնակցեցան, այլեւ՝ ախոյեան դարձան: Ուշագրաւ է նաեւ, որ դանիացիք Եւրոպայի խաղերուն աւելի յաջողութիւն արձանագրած են՝ քան աշխարհի ախոյեանութիւններու իրենց մասնակցութիւններուն ընթացքին:

Մարզիչ Օլսըն բերդապահութեան համար ունի բազմաթիւ թեկնածուներ: Սթոք Սիթիի փորձառու բերդապահ Թոմաս Սորենսըն, որ 99 անգամ կրած է ազգային խումբին շապիկը, պիտի պաշտպանէ Դանիոյ բերդը: Սորենսընի կրնան ընկերակցիլ Սթեֆըն Անտրըսըն (30 տարեկան), Մ. Եունայթըտի Անտէրս Լինտեկարտը (27 տարեկան) եւ կամ 33-ամեայ Եսփըր Քրիսթիանսընը: Վերոնշեալները Դանիոյ բերդը պաշտպանած են եւ լաւ տպաւորութիւն ձգած են Ֆուլթոնի խաղերուն եւ մանաւա՛նդ Դանիոյ համակիրներուն վրայ:


Պաշտպանողական գիծի համար դանիացիք չունին մեծ թիւով մարզիկներ: Կեդրոնը պիտի պաշտպանեն Տան-

իէլ Էկըր (27 տարեկան, Լիվըրփուլ) եւ Սիմոն Բիայէրը (22 տարեկան, Ա.Ֆ.Ս.Ռոմա): Ճիշդ է, որ այս երկուքը ակրմբային թէ միջազգային իմաստով ծանօթ են, սակայն զիրենք փոխարինողները անծանօթ մարզիկներ են: Աջ կողմը կրնայ վստահուիլ Լարս Եաքոպսընի (32 տարեկան, Քոփենհագըն), իսկ ձախ կողմը պիտի պաշտպանէ Սիմոն Փուլսըն (27 տարեկան, ԱԶ): Պահեստի մարզիկները անփորձ են եւ փոխարինելու պարագային պիտի մտահոգեն մարզիչ Օլսընն ու բազմահազար համակիրները: Անտրէաս Պիէլլանտ, (23 տարեկան), Եորէս Օքորէ (19 տարեկան), Լէոն Եէսըն (25 տարեկան) եւ Տանիէլ Ուաս (22 տարեկան) երիտասարդ ու անփորձ են: Մարզիչ Օլսըն մեծ աշխատանք ունի կատարելիք լաւ ձեւով կազմակերպելու յետսապահ գիծը եւ մրցաշարքին անախորժ անակնկալներու առջեւ չգտնուելու համար:

Միջնապահ գիծի վրայ դանիացիք դժուարութիւն չունին: Բազմաթիւ են միջնապահ խաղացողները, որոնք կրնան կրել ազգային խումբին շապիկը եւ դաշտ ներկայանալով պաշտպանել վայքինկներու դրօշը: Կեդրոնի միջնապահներ Միքայէլ Սիլվէրպուդը (30 տարեկան, Եանկ Պոյզ), Եաքոպ Փուլսըն, (28 տարեկան), Ուիլիըմ Քլիսթ (27 տարեկան, Շթուլթկարթ) թեկնածու են այս դիրքին համար: Կեդրոնի պաշտպանութիւնը կրնայ վստահուիլ նաեւ Էվիանի 32-ամեայ Քրիսթիան Փուլսընի կամ Քլայպ Պրիւթի 26-ամեայ Նիքի Զիմլինկի: Այս երկուքն ալ իրենց պարտականութիւնը լաւապէս կատարող մարզիկներ են: Յառաջապահներուն օգնող միջնապահներ են Քրիսթիան Էրիքսըն (20 տարեկան, Այաքս), Լաս Շոն (25 տարեկան, Նէք), Թոմաս Էնեկուլտսըն (24 տարեկան, Կրոնինկըն) եւ 28-ամեայ Միքէլ Պէքմէն:

Կեղրոնի յառաջապահի դիրքին համար կան հիմնական երեք մարզիկներ: Նիքլաս Փեթերսըն (24 տարեկան, Կրոնինկըն), Մատս Եանքրը (30 տարեկան, Ռոտտա) եւ Նիքլաս Պենտները (24 տարեկան, Սանտրլիչեստ): Բնականաբար, այս վերջինը հիմնական կազմին մաս կազմելու հաւանականութիւն ունեցող գլխաւոր մարզիկն է: Աջ կողմէն անոր կրնան օգնել 25-ամեայ Թոպիաս Միքելսընը եւ կամ Պրոնտպիի 33 տարեկան յառաջապահ Տենիս Ռոմետտասը: Յառաջապահներ Միքայէլ Քրոն-Տէհլի (28 տարեկան, Պրոնտպի) եւ Նիքոլայ Եորկընսըն (21 տարեկան, Քայգրրսլաութըրն) ձախ կողմի յառաջապահներ են:

Դանիացիք միշտ ալ կիրարկած են յարձակողական ոճի ֆուլթպոլ եւ այդ պատճառով ալ անոնց մրցումները միշտ ալ եղած են կոլառատ: Մարզիչ Օլսընի տղաքը սակայն նախորդ մոնտիալին չյարգեցին այս «աւանդութիւնը», ինչ որ պատճառ դարձաւ դանիական ֆուլթպոլի «հէքիաթային» բացակայութեան: Այս մրցաշարքին եւս, հաւանա-



Քրիսթիան Էրիքսըն:

բար Օլսըն կիրարկէ նմանօրինակ խաղաոճ մը: Անոնք կը գտնուին բաւական ղժուար խմբակի մը մէջ, ուր մրցակցութիւնը սուր պիտի ըլլայ Գերմանիոյ եւ Հոլանտայի նման կազմերու ներկայութեան: Առաջին մրցումին անոնք Հոլանտայի դէմ պիտի փորձեն առնուազն կէտ մը խել: Դանիացիք վերջին անգամ Եւրոպայի ախոյեանութեան զծով Հոլանտայի դէմ մրցած են քսան տարիներ

առաջ, կիսաւարտականին, եւ խաղին 120 վայրկեանները աւարտած են հաւասարութեամբ, ու անոնք յաղթական դուրս եկած են փենալթիներով: Այդ սերունդը տիրացաւ ախոյեանութեան: Երկրորդ մրցումը դանիացիք պիտի կատարեն Փորթուգալի դէմ: Անյաջողութիւն մը եւ արդէն տունդարձը ապահով կը դառնայ անոնց համար: Երրորդ մրցումին դանիացիք պիտի մրցին իրենց «դրացի» Գերմանիոյ դէմ: Քսան տարի առաջ, աւարտականին, անոնք Գերմանիոյ յաղթելով դարձան ախոյեան: Գերմանացիք վրէժ ունին լուծելիք եւ թոյլ պիտի չտան, որ դանիացիք արգելակեն իրենց ճամբան:

Մարզիչ Օլսըն կը պատկանի այն սերունդին, որ դանիական ֆուլթպոլի զարթոնքը ծանուցեց աշխարհին: Երեսուն տարիներ ետք, երբ արդէն Լաուտրուփներն ու Լարսընները անցեալ են, դանիացիք վերագարթնելու համար կարիքը ունին նոր «հէքիաթներու», որ պէսզի շարունակեն «հրաշքներ» ներկայացնել ֆուլթպոլի աշխարհին:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Armavia
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand, La Terre vue du Ciel. Licence 075 960031 StudioVICKEN 2005 1905

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hamrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com



«ԵՈՒՐՕ 2012»-ի ԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՅՏԱԳԻՐԸ

ԽԱՂ	ԽՄԲ.	ԹՈՒԱԿԱՆ	ԺԱՄԸ*	ԵՐԿԻՐ	ԱՐԴԻԻՆՔ	ԵՐԿԻՐ
1	Ա.	8 Յունիս	17:00	Լեհաստան		Յունաստան
2	Ա.	8 Յունիս	19:45	Ռուսիա		Չեխիա
3	Բ.	9 Յունիս	17:00	Հոլանտա		Դանիա
4	Բ.	9 Յունիս	19:45	Գերմանիա		Փորթուգալ
5	Գ.	10 Յունիս	17:00	Սպանիա		Իտալիա
6	Գ.	10 Յունիս	19:45	Իրլանտա		Խրուաթիա
7	Դ.	11 Յունիս	17:00	Ֆրանսա		Անգլիա
8	Դ.	11 Յունիս	19:45	Ուքրանիա		Շուէտ
9	Ա.	12 Յունիս	17:00	Յունաստան		Չեխիա
10	Ա.	12 Յունիս	19:45	Լեհաստան		Ռուսիա
11	Բ.	13 Յունիս	17:00	Դանիա		Փորթուգալ
12	Բ.	13 Յունիս	19:45	Հոլանտա		Գերմանիա
13	Գ.	14 Յունիս	17:00	Իտալիա		Խրուաթիա
14	Գ.	14 Յունիս	19:45	Սպանիա		Իրլանտա
15	Դ.	15 Յունիս	19:45	Շուէտ		Անգլիա
16	Դ.	15 Յունիս	17:00	Ուքրանիա		Ֆրանսա
17	Ա.	16 Յունիս	19:45	Չեխիա		Լեհաստան
18	Ա.	16 Յունիս	19:45	Յունաստան		Ռուսիա
19	Բ.	17 Յունիս	19:45	Փորթուգալ		Հոլանտա
20	Բ.	17 Յունիս	19:45	Դանիա		Գերմանիա
21	Գ.	18 Յունիս	19:45	Խրուաթիա		Սպանիա
22	Գ.	18 Յունիս	19:45	Իտալիա		Իրլանտա
23	Դ.	19 Յունիս	19:45	Անգլիա		Ուքրանիա
24	Դ.	19 Յունիս	19:45	Շուէտ		Ֆրանսա

*Կրինուիչի ժամով:

Ա. ԽՄԲԱԿ

	Խ.	Յ.	Պ.	Հ.	Ն.-Ս.	Կ.
Ռուսիա	0	0	0	0	0	0
Յունաստան	0	0	0	0	0	0
Չեխիա	0	0	0	0	0	0
Լեհաստան	0	0	0	0	0	0

Բ. ԽՄԲԱԿ

	Խ.	Յ.	Պ.	Հ.	Ն.-Ս.	Կ.
Հոլանտա	0	0	0	0	0	0
Գերմանիա	0	0	0	0	0	0
Դանիա	0	0	0	0	0	0
Փորթուգալ	0	0	0	0	0	0

Գ. ԽՄԲԱԿ





	Խ.	Յ.	Պ.	Հ.	Ն.-Ս.	Կ.
Սպանիա	0	0	0	0	0	0
Իտալիա	0	0	0	0	0	0
Խրուաթիա	0	0	0	0	0	0
Իրլանտա	0	0	0	0	0	0

Դ. ԽՄԲԱԿ



	Խ.	Յ.	Պ.	Հ.	Ն.-Ս.	Կ.
Անգլիա	0	0	0	0	0	0
Շուէտ	0	0	0	0	0	0
Ֆրանսա	0	0	0	0	0	0
Ուքրանիա	0	0	0	0	0	0

Խ.- Խաղացած Յ.- Յաղթած Պ.- Պարտուած Հ.- Հաւասարած Ն.- Նշանակած կող Ս.- Ստացած կող Կ.- Կէտ


ՔԱՌՐԴ ԱԻՄՐՏԱԿԱՆ

25	21 Յունիս	19:45	Ա. խմբակի առաջինը Բնական ժամ Յաւելեալ ժամ Փենալթիներ		Բ. խմբակի երկրորդը
26	22 Յունիս	19:45	Բ. խմբակի առաջինը Բնական ժամ Յաւելեալ ժամ Փենալթիներ		Ա. խմբակի երկրորդը
27	23 Յունիս	19:45	Գ. խմբակի առաջինը Բնական ժամ Յաւելեալ ժամ Փենալթիներ		Դ. խմբակի երկրորդը
28	24 Յունիս	19:45	Դ. խմբակի առաջինը Բնական ժամ Յաւելեալ ժամ Փենալթիներ		Գ. խմբակի երկրորդը

ԿԻՍԱԻՄՐՏԱԿԱՆ

29	27 Յունիս	19:45	Թիւ 25 խաղին յաղթականը Բնական ժամ Յաւելեալ ժամ Փենալթիներ		Թիւ 27 խաղին յաղթականը
30	28 Յունիս	19:45	Թիւ 26 խաղին յաղթականը Բնական ժամ Յաւելեալ ժամ Փենալթիներ		Թիւ 28 խաղին յաղթականը

ԱԻՄՐՏԱԿԱՆ

31	1 Յուլիս	19:45	Թիւ 29 խաղին յաղթականը Բնական ժամ Յաւելեալ ժամ Փենալթիներ		Թիւ 30 խաղին յաղթականը
----	----------	-------	--	---	------------------------

«ԵՈՒՐՕ 2012»



ԱՆՈՅԵԱՆ

.....
Թիւ 31 խաղին յաղթականը



ԳԵՐՄԱՆԻԱ



նի: Գլխավոր բերդապահը, անկասկած, Պայէրն Միլնիխի երիտասարդ (25 տարեկան), բայց բացառիկ կարողութիւններով օժտուած բերդապահ Մանուէլ Նէօրըն է: Ճիշդ է, որ ան հազիւ 25 միջազգային մրցումներ կատարած է, բայց վստահութիւն ներշնչող բերդապահ է: Ձայն փոխարինողներ կրնան ըլլալ Պայէր Լեւերքուզընի Ռընէ Ատլէրը (27 տարեկան), Հանովըրի Ռոն-Ռոպըրթ Չիլըրը (23 տարեկան) եւ Պրեմընի Քիմ Ուայէզը (30 տարեկան):

Գերմանիոյ յետսապահ գիծը կը թրւի ըլլալ բաւական զօրաւոր: Վերջին տասը մրցումներուն անոնք ստացան միայն 15 կոլ: Փորձառուներու եւ երիտասարդներու «խառնուրդով» մը մարզիչ Լով պիտի փորձէ կասեցնել մրցակիցները: Խմբապետ Ֆիլիփ Լահմ (28 տարեկան, Պ. Միլնիխ) 85 անգամ կրած է ազգային խումբին շապիկը: Լահմ յարձակումներու մասնակցիլ սիրող մարզիկ է: Ան իր կողքին ունի Փըր Մեթսէյքըրը (27 տարեկան, Արսենալ), Ամէ Ֆրետրիխը (32 տարեկան, Շիքսկօ Ֆայրը), Հոլկըր Պէտսթապըրը (22 տարեկան, Գերմանիոյ Գերմանիա) և Գերմանիոյ Գերմանիա:

Գերմանիոյ ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է տասը անգամ. 1972-ին, 1980-ին եւ 1996-ին հանդիսացած է ախոյեան: 1976-ին, 1992-ին եւ 2008-ին գրաւած է երկրորդ դիրքը, իսկ 1988-ին հանդիսացած է երրորդ: Կատարած է 38 մրցում: Արձանագրած է 19 յաղթանակ, 10 հաւասարութիւն եւ 9 պարտութիւն: Նշանակած է 55 կոլ եւ ստացած է 39 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Եոաքիմ Լով:

«Եուրօ 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Գերմանիոյ ազգային խումբը Ա. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 10 մրցում, արձանագրելով 10 յաղթանակ: Նշանակեց 34 կոլ եւ ստացաւ 7 կոլ: Ան գրաւեց խմբակին Ա. դիրքը եւ հասաւ «Եուրօ 2012»-ի աւարտական հանգրուան:

Եւրոպայի ախոյեանութիւններուն ամէնէն շատ յաջողութիւններ արձանագրած, եւ գրեթէ ամէն մրցաշարքի իբրեւ թեկնածու ներկայացող Գերմանիա, այս ախոյեանութեան ալ գլխավոր թեկնածուներէն մէկն է: Վերջին ախոյեանութեան փոխ ախոյեան հանդիսացած գերմանացիք աւելի ինքնավստահ կը ներկայանան եւ իրենց աչքերը յառած են բաժակին:

Մարզիչ Լով բերդապահութեան պաշտօնին համար դժուարութիւն չու-

նի: Գլխավոր բերդապահը, անկասկած, Պայէրն Միլնիխի երիտասարդ (25 տարեկան), բայց բացառիկ կարողութիւններով օժտուած բերդապահ Մանուէլ Նէօրըն է: Ճիշդ է, որ ան հազիւ 25 միջազգային մրցումներ կատարած է, բայց վստահութիւն ներշնչող բերդապահ է: Ձայն փոխարինողներ կրնան ըլլալ Պայէր Լեւերքուզընի Ռընէ Ատլէրը (27 տարեկան), Հանովըրի Ռոն-Ռոպըրթ Չիլըրը (23 տարեկան) եւ Պրեմընի Քիմ Ուայէզը (30 տարեկան):



Ֆիլիփ Լահմ:

րեկան, Պ. Միլնիխ), Ճերոմ Պոթանկը (23 տարեկան, Պ. Միլնիխ), Մարսել Շըմելցը (24 տարեկան, Պ. Տորթմունտ) եւ Բրիսթիան Թրաշը (24 տարեկան, Վոլսպուրկ), որոնք պիտի ամրացնեն պաշտպանողականը:

Գերմանիոյ ազգային խումբին ուժականութեան եւ յաջողութեան գաղտնիքը իր միջնապահ գիծն է: Գերմանացիք ունին երիտասարդ, գործունեայ եւ բարձրորակ միջնապահ ֆուլթպոյիստներ: Անոնք ամենայն յաջողութեամբ կը կատարեն օղակողի իրենց պարտականութիւնը: Փորձառու Պասթիան Շվայնշթայկը (27 տարեկան, Պ. Միլնիխ), ծագումով թուրք Մեսութ Օզիլ (23 տարեկան, Ռ. Մատրիտ), Սամի Խտէյրա (24 տարեկան, Ռ. Մատրիտ) եւ Թոմաս Միլլըր (22 տարեկան, Պ. Միլնիխ) կը կազմեն միջնապահ գիծին հիմնաքարը: Վերոնշեալ չորսն ալ, հակառակ իրենց երիտասարդ տարիքին, արդէն իսկ միջազգային գետնի վրայ ունին մեծ փորձառութիւն: Զանոնք փոխարինող կրնան ըլլալ Սիմոն Ռուլփս (30 տարեկան, Պ. Լեւեքուզըն), Թոնի Բրուզ (22 տարեկան, Պ. Միլնիխ), Մարիո Կոթցէ (19 տարեկան, Պ. Տորթմունտ) եւ Սեպասթիան Ռուտտի (22 տարեկան, Հոֆենհայմ): Մարզիչ Լովի տրամադրութեան տակ կան նաեւ երիտասարդ այլ մարզիկներ, որոնք կրնայ ազգային խումբ հրաւիրուիլ իբրեւ փոխարինող միջնապահներ:

Յառաջապահ գիծի վրայ, 33-ամեայ



DEUTSCHER FUSSBALL-BUND
www.dfb.de

Միրոսլաւ Բլոզէ:

Միրոսլաւ Բլոզէ տակաւին ներկայ է: Լացիոյի մաս կազմող այս մարզիկը յաջող ելոյթներ կ'ունենայ ազգային խումբին հետ եւ կը նկատուի կոլերու իսկական «որսորդ» մը: Անոր կողքին են Մարիո Կոմէզ (26 տարեկան, Պ. Միլնիխ) եւ Լուքաս Փոտոլսքի (26 տարեկան, Քէօլն): Վերջինը, հակառակ երիտասարդ տարիքին, կոլեր նշանակելու մեծ «վարպետ» մըն է: Ազգային խումբին հետ ցարդ ան նշանակած է 43 կոլ:

Գերմանացիք միշտ ալ իրենց ներկայութիւնը փաստած են նմանօրինակ

մրցաշարքերու ընթացքին: Անոնք անընչան մասնակցութիւն չատ քիչ անգամ ունեցած են: Անոնք այս մրցաշարքի գտումի մրցումներուն ունեցան փայլուն յաջողութիւն, երբ իրենց բոլոր մրցումները աւարտեցին յաղթանակով: Եւրոյի մրցումներու ծիրէն ներս, անոնք կը գտնուին Բ. խմբակին մէջ, որ համեմատաբար կը նկատուի միջակ խմբակ: Առաջին մրցումին անոնք պիտի մրցին Փորթուգալի դէմ, որուն յաղթեցին նախորդ Եւրոյին եւ հասան կիսաւարտական: Երկրորդ մրցումը իրենց դրացի «Թշնամիին»՝ Հոլանտայի դէմ է: Այս մրցումը Եւրոյի ծիրէն ներս անոնց միջեւ տեղի ունենալիք 5-րդ մրցումն է: Վերջին մրցումը համեմատաբար ամէնէն հանգիստը պիտի ըլլայ գերմանացիներուն համար, երբ անոնք կը մրցին Դանիոյ կազմին դէմ:

Գերմանացիք Սպանիոյ եւ Հոլանտայի կողքին կը նկատուին մրցաշարքի հիմնական թեկնածուներէն մէկը: Անոնք վստահաբար պիտի փորձեն հետու մնալ անախորժ անակնկալներէ, մասնաւորաբար առաջին հանգրուանին, որպէսզի իրենց համակիրներուն շրջապատը արեւելեան Եւրոպայի մէջ քիչ մը երկարի:



Մարզիչ Եռաքիմ Լով:

ՓՈՐԹՈՒԳԱԼ



տրամադրութեան տակ եղող երեք բերդապահներն ալ հաւասար հնարաւորութիւններ ունին կազմին թիւ մէկը ըլլալու: Պենֆիլքայի 29-ամեայ էտուարտօն, Սփորթինկ Լիզպոնի 24-ամեայ Ռուի Փաթրիսիօն եւ Պրակայի 36-ամեայ Քուիմը պիտի փորձեն ներկայանալ հիմնական կազմին հետ: Ասոնց մէջ ամէնէն վստահելին մարզիչ Պենթոյի համար ցարդ էտուարտօն է:

Մարզիչ Պենթօ դժուարութիւն չունի յետսապահ գիծը կազմելու: Անոր կորիզը պիտի կազմեն Ռէալ Մատրիտի մարզիկները: 29-ամեայ Փեփէ, 24-ամեայ Տապիօ Քոէնթրաօ եւ 33-ամեայ վեթերան Ռիքարտօ Քարվալիօ: Այս մարզիկներուն պիտի օգնեն սպանական այլ ակումբներու մաս կազմող անուանի մարզիկներ: Տուտա (31 տարեկան, Մալալկա), Ռիքարտօ Քոսթա (30 տարեկան, Վալենսիա) եւ Նելսըն (28 տարեկան, Սելիլլա), ինչպէս նաեւ Զենիթի 30-ամեայ Պրունօ Ալվէս: Մարզիչ Պենթօ կրնայ նաեւ հրաւիրել Ռոլանտօն (26 տարեկան, Փորթօ), Ժոաօ Փարէյրան (28 տարեկան, Սփորթինկ Լիզպոն) եւ Սիլվիոն (24 տարեկան, Աթլետիքօ Մատրիտ):


Փորթուգալի ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է հինգ անգամ. 2004-ին հանդիսացած է երկրորդ: 1984-ին եւ 2000-ին գրաւած է չորրորդ դիրքը: Կատարած է 23 մրցում: Արձանագրած է 12 յաղթանակ, 4 հաւասարութիւն եւ 7 պարտութիւն: Նշանակած է 34 կոլ եւ ստացած է 22 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Փաուլօ Պենթօ:

«Եուրօ 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Փորթուգալի ազգային խումբը Լ. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 8 մրցում, արձանագրելով 5 յաղթանակ, 1 հաւասարութիւն եւ 2 պարտութիւն: Նշանակեց 21 կոլ եւ ստացաւ 12 կոլ: Ան գրաւեց խմբակին Բ. դիրքը: Երկրորդ դիրքը գրաւելով ան իրաւունք ստացաւ մրցելու փլէյ-օֆի մրցումներուն: Երթ ու դարձի դրութեամբ մրցեցաւ Պոսնիոյ դէմ 0-0 եւ 6-2 արդիւնքով յաղթելով հասաւ «Եուրօ 2012»-ի աւարտական հանգրուանին:

Փորթուգալի ազգային խումբը վերջին տարիներուն հետզհետէ ինքզինք

փաստող խումբ մըն է: Ճիշդ է, որ այս մրցաշարքին չկան Ֆիկոներ, Կոմէզներ ու Մանիչէներ, սակայն փորթուգալցիք կը մնան տոկուն կազմ մը: Պատմութիւնը ցոյց կու տայ, թէ անոնց մասնակցութիւնները Եւրոպայի մրցաշարքերուն գուր չեն անցած:



Մարզիչ Պենթօ բերդապահութեան համար շատ ընտրութիւններ չունի: Իր



Մարզիչ Փաուլօ Պենթօ:

Փորթուգալացիներուն «Աքրիլէսի Կրունկը» իրենց միջնապահ գիծն է: Մարգրիչ Պենթո կը գիտակցի, որ իր տրամադրութեան տակ չկան բարձրորակ միջնապահ մարզիկներ, որոնք կրնան յետսապահ եւ յառաջապահ մարզիկներուն օգնել: Այս ծանր պարտականութիւնը պիտի վստահուի Ռաուլ Մէլլրէլսի (28 տարեկան, Չելսի), Ժոաո Մուլթինիոյի (25 տարեկան, Փորթո), Միկէլ Վելոսոյի (25 տարեկան, Ճենովա), Ռուպէն Միքաէլի (25 տարեկան, Սարակոսա) եւ Տէնիի (28 տարեկան, Ջենիթ): Երիտասարդ միջնապահները շատ յուսադրող չեն: Անոնք պիտի մնան նստարաններուն վրայ: Անտրէ Քասթրօ (23 տարեկան, Սփորթինկ Խիխոն) եւ Անտրէ Սանթոս (22 տարեկան, Սփորթինկ Լիգայոն):

Յառաջապահ գիծին ու ազգային խումբին աստղն ու յոյսը աշխարհի լաւագոյն յառաջապահներէն Քրիսթիանօ Ռոնալտօն է: Ռէյալ Մատրիտի մաս կազմող 27-ամեայ այս մարզիկը այս տարի կը բոլորէ փայլուն տարեշրջան մը: Անոր ընկերակից պիտի ըլլայ Մանչեսթրը Եունայթըտի 25-ամեայ Նանին,



որ նոյաչս բացառիկ կարողութիւններու տէր յառաջապահ մըն է: Եթէ Ռոնալտօ «ճեղքող» ու նշանակող յառաջապահ մըն է, Նանի կողի առիթներ ստեղծող է: Այս երկուքին ետին կան Հէյտըր Փոսթիկան (29 տարեկան, Սարակոսա), Հիւկօ Ալմէյտան (27 տարեկան, Պեշիքթաշ) եւ Ռիքարտօ Քարեսման (28 տարեկան, Պեշիքթաշ): Կը խօսուի նոյնիսկ վեթերան յառաջապահ 35-ամեայ Նունօ Կոմէզի վերադարձին մասին: Կոմէզ, որ 79 անգամ մաս կազմած է ազգային խումբին, փորձառու յառաջապահ է եւ վարպետ կող նշանակող մըն է:

Փորթուգալացիք վերջին տասնամեա-

կին բաւական արդիւնաւէտ եւ գեղեցիկ ֆուլթպոլ կը ներկայացնեն: Անոնք թէ՛ Եուրօններուն եւ թէ՛ մոտիալներուն տպաւորիչ ելոյթներ կ'ունենան: Այս մրցաշարքի գտումի մրցումները անոնք լաւ ձեւով չսկսան: Հաւասարութիւն մը Կիպրոսին հետ իրենց դաշտին վրայ եւ պարտութիւն մը Նորվեկիայէն: Կարծր-ւեցաւ, որ Փորթուգալ այլեւս պատմութիւն է եւ ոչինչ ունի ներկայացնելիք: Սակայն, յաջորդ մրցումներուն փորթուգալացիք փաստեցին հակառակը եւ հասան աւարտականներուն:

«Եուրօ 2012»-ի առաջին հանգրուանին անոնք խմբակից ունեցան Դանիան, Գերմանիան եւ Հոլանտան: Զտումի մրցումներուն անոնք երկու անգամ մրցեցան դանիացիներու հետ եւ իւրաքանչիւրը յաղթեց իր դաշտին վրայ: Գերմանիոյ հետ նախորդ միջազգային մրցաշարքերուն անոնք միշտ ալ պարտուած են: Իսկ հոլանտացիք վրէժ ունին փորթուգալացիներէն, մանաւանդ 2006-ի մոնտիալի երկրորդ հանգրուանի մրցումէն: Այդ մրցումը կը նկատուի մոնտիալներու պատմութեան ամէնէն կոշտ մրցումը եւ ճանչցուած է իբրեւ «Նիւրեմպերկի ճակատամարտը»:

Ահաւասիկ, նման մրցակիցներու դիմաց, Ռոնալտօ եւ ընկերները դժուարութիւն պիտի ունենան անկասկած, սակայն երբեք պիտի չուզեն կանուխ



ՄՊԱՆԻԱ



Սպանիոյ ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է ութը անգամ. 1964-ին եւ 2008-ին հանդիսացած է ախոյեան: 1984-ին գրաւած է երկրորդ դիրքը: Կատարած է 30 մրցում: Արձանագրած է 13 յաղթանակ, 9 հաւասարութիւն եւ 8 պարտութիւն: Նշանակած է 38 կոլ եւ ստացած 31 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Վիչենթէ Տէլ Պոսքէ:

«Եուրո 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Սպանիոյ ազգային խումբը թ. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 8 մրցում, արձանագրելով 10 յաղթանակ: Նշանակեց 26 կոլ եւ ստացաւ 6 կոլ: Ան գրաւեց խմբակին Ա. դիրքը եւ հասաւ «Եուրո 2012»-ի աւարտական հանգրուան:

Սպանական ֆուտպոլը կ'ապրի իր փառքի օրերը: Սպանիոյ ախոյեանութեան հետաքրքրութիւնը գրաւած է ֆուտպոլասէրներուն ուշադրութիւնը: Սպանիոյ երկու հսկաներուն ճակատումները համազօր դարձած են մոնտիալներու աւարտականներուն: Սպանական ախոյեանութիւնը եւրոպական ախոյեանութիւնը գերակայութիւնը եւրոպական ախոյեանութիւններուն զգալի է: Այս բոլորը, բնականաբար, անդրադարձած են ազգային խումբին վրայ: Շահել է ետք Եւ-

րոպայի ախոյեանութիւնը, սպանացի յաջողեցան առաջին անգամ ըլլալով դառնալ նաեւ աշխարհի ախոյեան, եւ այս մրցաշարքին կը ներկայանան իրեն գլխաւոր թեկնածու:

Մարզիչ Տէլ Պոսքէ մեծ փոփոխութիւններ չէ կատարած խումբէն ներս: Բերդապահութիւնը անգամ մը եւս վերապահուած է Մատրիտի 30-ամեայ փորձառու բերդապահ Իքէր Գազիասի: 128 անգամ ազգային խումբին շապիկը կրած այս մարզիկը բազմաթիւ տիտղոսներու տիրացած է եւ կը մնայ աշխարհի լաւագոյններէն մէկը: Զայն փոխարինողներ կրնան ըլլալ Լիվորփոլի 29-ամեայ Փեփէ Ռէյնան: Հակառակ յաջող բերդապահ մը ըլլալու իրողութեան, ան մնացած է Քազիասի շուքին տակ: Նոյնն է պարագան Պարսելոնայի Վիքթոր Վալտէզին, որ ստիպուած է պահեստի նստարաններուն վրայ նստիլ: Հակառակ 30 գարուններ բոլորելուն, ան միայն 7 անգամ հանդէս եկած է ազգային խումբի տարագով:


Սպանիոյ պաշտպանողական գիծը



կը մնայ բաւական ամուր, ինչպէս որ էր վերջին մոնտիալին ընթացքին: Հիմնական մարզիկները կը մնան իրենց պաշտօնին վրայ: Պարսելոնայի գոյգը՝ Քարլոս Փուլյոլ (33 տարեկան), որ 99 անգամ կրած է ազգային խուճբին շապիկը, պիտի ուզէ պատմութիւն կերտել, երկու անգամ տիրանալով Եւրոպայի ախոյեանութեան եւ ապա լքելով Ֆուլթուլիստի իր ասպարէզը: Ժեռար Փիքէ (25 տարեկան), հակառակ երիտասարդ տարիքին, ունի մեծ փորձառութիւն եւ կը նկատուի աշխարհի լաւագոյն յետսապահներէն մէկը: Ռէյալ Մատրիտի տոկուն յետսապահ 25-ամեայ Սերժիո Ռամոսը եւս երիտասարդ ու փորձառու է եւ իր չարքաշութեամբ չի գիշիր իր խմբակից Փուլյոլի: Այս եռեակը կրնան ամբողջացնել Ալվարո Արպէոլա (29 տարեկան, Ռ. Մատրիտ), Ռաուլ Ալպիոլ (26 տարեկան, Ռ. Մատրիտ) եւ Քարլոս Մարչենա (32 տարեկան, Վիլարէալ): Երիտասարդ յետսապահներէն նշենք Ալվարո Տոմինկէզը (22 տարեկան, Ա. Մատրիտ), Եորտի Ալպան (22 տարեկան, Վալենսիա) եւ Մարթին Մոնթոյան (20 տարեկան, Պարսելոնա Բ. կազմ):

Միջնապահ գիծի վրայ սպանացիք ոչ մէկ դժուարութիւն ունին: Անոնք հարուստ են միջնապահներով: Սպանիոյ ազգային խումբի միջնապահ գիծը կը նկատուի աշխարհի հզօրագոյնը, ինչ որ խումբը կը դարձնէ տիտղոսին թիւ մէկ թեկնածուն:

Սպանիոյ միջնապահ գիծի ղեկավարն ու «ուղեղ»ը Պարսայի մաէսթրօ 32-ամեայ Չաւի Հերնանտէզն է: Խաղը դիտող, ղեկավարող, գեղեցիկ փոխանցումներ կատարող, կոլի առիթներ ստեղծող եւ նաեւ երբեմն կոլ նշանակող այս մարզիկը խումբին հիմնական մարզիկն է: Անոր աշխատանքը կ'ամբողջացնէ Պարսայի իր խմբակից Անտրէաս Ինիեսթան: Ինիեսթա (27 տարեկան) ունի Չաւիին յատկութիւնները, բայց չունի անոր փորձառութիւնը: Այս երկուքին կողքին միջնապահ գիծը կ'ամբողջացնէ Մ. Սիթիի միջնապահ գիծի ղեկավար՝ 27-ամեայ Տաւիտ Սիլվան, որ նոյնպէս բացառիկ կարողութիւններով օժտուած միջնապահ մըն է: Այս երեքին կողքին կան նաեւ այլ միջնապահներ, որոնք կրնան ամբողջացնել միջնապահ



Մարզիչ Վիչենթէ Տէլ Պոսթ:

գիծը կամ կատարել փոխարինողի դեր: Խաւի Ալոնսօ (30 տարեկան, Ռ. Մատրիտ) աւելի շատ պաշտպանողի դեր կը վերցնէ խաղին մէջ: Սեսք Ֆապրեքաս (24 տարեկան, Պարսելոնա) դարձեալ յարձակումներ սիրող մարզիկ է եւ կոլեր նշանակելու մէջ բաւական վարպետ: Սերժիո Պուլսքեց (23 տարեկան, Պարսելոնա), Խեսիւս Նաւաս (26 տարեկան, Սելիլլա), Սանթի Քազորլա (27 տարեկան, Մալակա) պիտի մնան պահեստի նստարաններուն վրայ:

Յառաջապահ գիծը ունի բաւական վարպետ կոլ նշանակողներ: Մեծագոյն բացական կրնայ ըլլալ Պարսայի 31-ամեայ Տաւիտ Վիլլան: Ան վիրաւոր է եւ յստակ չէ թէ պիտի կարենա՞յ իր մասնակցութիւնը բերել այս մրցաշարքին: Պարսելոնայի անոր խմբակից Փետրօ

Ռոտրիկէզ (24 տարեկան) տակաւին ինքզինք չէ հաստատած ազգային խումբին մէջ: Ֆեռնանտօ Թորէս (27 տարեկան, Չելսի) նոյնպէս վտանգաւոր յառաջապահ մըն է եւ ազգային խումբին հետ յաջող ելոյթներ կ'ունենայ: 27-ամեայ Ֆեռնանտօ Լորենթէ կրնայ ընկերակցիլ Թորէսի: Աթլետիքօ Պիլպաոյի մաս կազմող Լորենթէ արագաշարժ եւ ճարպիկ մարզիկ մըն է: Ռոպերթօ Սոլտատօ (26 տարեկան, Վալենսիա) եւ Ալվարօ Նեկրետօ (26 տարեկան, Սելիլլա) հակառակ միջազգային գետնի վրայ իրենց անփորձութեան պիտի ամբողջացնեն կազմը:

Սպանացիք գտումի մրցումներուն ոչ մէկ դժուարութիւն ունեցան: Անոնք իրենց բոլոր խաղերը աւարտեցին յաղթանակով: Եուրոյի ծիրէն ներս իրենց առաջին մրցումը պիտի կատարեն Յունիս 10-ին, Իտալիոյ դէմ: Սպանացիք պիտի ըլլան զգոյշ, որովհետեւ Իտալացիք միշտ ալ «յոզնեցուցած» են սպանացիները: Յաջորդ երկու մրցումները սպանացիք պիտի կատարեն յաջորդաբար Այիրի եւ Խրուաթիոյ դէմ: Այս երկու կազմերն ալ կը նկատուին յամառ մրցակիցներ: Սպանացիք պիտի չուզեն անախորժ անակնկալներու առջեւ գտնուիլ: Անոնք իրենց «առաքելութիւնը» պիտի փորձեն շարունակել Յունիս 10-էն ետք եւ, ինչու չէ, իբրեւ հիմնական թեկնածու այս մրցաշարքին, Յուլիս 1-ին Քիեւի ողիմպիական մարզադաշտին վրայ յաջորդաբար երկրորդ անգամ ըլլալով բարձրացնեն բաժակը:



Չաւի Հերնանտէ:

ԻՏԱԼԻԱ



Թիւնը պիտի վստահի աշխարհի լաւագոյն բերդապահներէն 34-ամեայ Ճիան-լուիճի Պիլֆոնի (Եուվենթուս): 112 անգամ ազգային խումբին շապիկը կրած այս մարզիկը «տաք ու պաղ» օրերուն մնաց Եուվէի անդամ, եւ հակառակ բացառիկ կարողութիւններու տէր մարզիկ ըլլալուն, չհեռացաւ իր կազմէն: Ան իտալիոյ յետսապահ գիծին համար ապահով խարիսխ մըն է: Ան նաեւ ազգային խումբին խմբապետն է: Զինք փոխարինողներ կրնան ըլլալ Էմիլիանօ Վիվիանօ (26 տարեկան, Փալերմօ), Մաթիա Քասանի (28 տարեկան, Ֆիորենթինա) եւ Անտրէա Ռանոքիա (24 տարեկան Ի. Միլան): Ամէն պարագայի, իտալական ֆուլթպոլը ծանօթ է իր լաւ բերդապահներով: Հետեւաբար, մարզիչ Փրանտելլի դժուարութեան առջեւ պիտի չգտնուի:

Իտալացիք նշանաւոր են նաեւ իրենց պաշտպանողականով: Անոնք միշտ ալ ունեցած են լաւ յետսապահներ, որոնց շնորհիւ յաճախ ճանչցուած են որպէս պաշտպանողական խաղ կիրարկող: Ներկայի իտալիան կը տարբերի անցելէն: Այսօր իտալացիք չունին անուանի

Իտալիոյ ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է եօթը անգամ. 1968-ին հանդիսացած է ախոյեան: 2000-ին գրաւած է երկրորդ դիրքը, իսկ 1980-ին եւ 1988-ին հանդիսացած է չորրորդ: Կատարած է 27 մրցում: Արձանագրած է 11 յաղթանակ, 12 հաւասարութիւն եւ 4 պարտութիւն: Նշանակած է 27 կոլ եւ ստացած է 18 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Սեզարէ Փրանտելլի:

«Եուրօ 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, իտալիոյ ազգային խումբը Գ. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 10 մրցում, արձանագրելով 8 յաղթանակ եւ 2 հաւասարութիւն: Նշանակեց 20 կոլ եւ ստացաւ 2 կոլ: Ան գրաւեց խմբակին Ա. դիրքը եւ հասաւ «Եուրօ 2012»-ի աւարտական հանգրուանին:

Հակառակ աշխարհի հօրագոյն խումբերէն մէկը ըլլալու իրողութեան, իտալացիք մեծ յաջողութիւններ չեն արձանագրած Եուրօյի մրցաշարքերուն: Մոնտիալներուն միշտ ալ իրենց հետքը ձգած իտալացիք, Եւրոպայի բա-

ժակին տիրացած են միայն մէկ անգամ, այն ալ տարիներ առաջ: Վերջին մոնտիալին ձախող արդիւնքներ արձանագրելէ ետք, իտալացիք նոր մարզիչի գլխաւորութեամբ յաջող մրցումներ սկսան կատարել եւ այսօր կը նկատուին պատրաստ կազմ մը տիրանալու Եւրոպայի ախոյեանութեան:


Մարզիչ Փրանտելլի բերդապահու-



Անտրէա Փիրլօ:

յետսապահներ: Պարզապէս կան փորձառու եւ լաւ յետսապահներ, որոնք պիտի փորձեն կասեցնել մրցակիցներու գրոհները: Ժիորճիօ Զիբլլինի (27 տարեկան, Եռվենթոս), Անտրէա Պարզակլի (30 տարեկան, Եռվենթոս), Քրիսթիան Մաճիօ (30 տարեկան, Նափոլի), Լէոնարտօ Պոնուչի (24 տարեկան, Եռվենթոս), Մաթիա Քասանի (28 տարեկան, Ծիորենթինա) պիտի ըլլան հիմնական կորիզը այն պաշտպանողականին, որուն վրայ պիտի հիմնուի մարզիչ Փրանտելլի: Իտալացին շատ այլընտրանքներ չունի: Կան երիտասարդ յետսապահներ, որոնք միջազգային գետնի վրայ տակաւին անփորձ են ու նման մրցաշարքի մը ընթացքին ազգային խումբին յոյսերը կրնան չարդարացնել: Տաւիտ Սանթօ (21 տարեկան, Նիւքէսթը), Անտրէա Ռանոքիա (24 տարեկան, Ի. Միլան) եւ Իկնասիօ Ապաթէ (25 տարեկան, Ա.Սէ. Միլան) փոխարինողներու նստարանին վրայ պիտի մնան գոնէ այս մրցաշարքին ընթացքին:

Միջնապահ գիծի ալֆան ու օմեկան վեթերան միջնապահ Անտրէա Փիրլօն է: 32-ամեայ այս մարզիկը իր փոխանցումներով, խաղ դեկավարելու կարողութեամբ եւ կոլի առիթներ ստեղծելու հմտութեամբ կը մնայ թիւ մէկ իտալացին: Եթէ Փիրլօ շարժի, ազգային խումբը կը շարժի: Անոր անմիջական օգնականն է Տանիէլէ Ռոսի (28 տարեկան, Ռոմա), որ նոյնպէս տարիներէ ի վեր մաս կը կազմէ ազգային խումբին եւ



Անթոնիօ Բասսանօ:

կը կատարէ «սեւ աշխատանք»: Այս գոյգին հետ կրնան դաշտ ներկայանալ Քլաուտիօ Մարքիզիօ (26 տարեկան, Եռվէ), Ռիքարտօ Մոնթոլիփօ (27 տարեկան, Ծիորենթինա), Անճելօ Փալամպօ (30 տարեկան, Ի. Միլան), Սիմոնէ Փեփէ (28 տարեկան, Եռվէ) եւ Ալպերթօ Աքուլլանի (27 տարեկան, Ա. Սէ. Միլան):

Յառաջապահ գիծի վրայ իտալացիներուն հիմնական մարզիկները պիտի ըլլան Անթոնիօ Բասսանօ (29 տարեկան, Ա.Սէ. Միլան), Ժիուզեփէ Ռոսսի (25 տարեկան, Վիլարէալ) եւ Մարիօ Պալոթելլի (21 տարեկան, Մ. Սիթի): Առաջին երկուքը ազգային խումբին հետ բազմ

միցս հանդէս եկած մարզիկներ են: Անոնք կոլ նշանակելու մէջ բաւական ճարպիկ են: Իսկ Պալոթելլի, հակառակ իր երիտասարդ տարիքին, խմբակիցներուն հետ կ'ունենայ յաջող ելոյթներ եւ կրնայ մաս կազմել հիմնական կազմին ու ինքզինք պարտադրել: Այլ յառաջապահ մըն է Ալպերթօ Ժիլարտինօն (29 տարեկան, Ժենովա), որ միջազգային գետնի վրայ փորձառու թիւն ունեցող յառաջապահ մըն է: Ժիամփաուլիօ Փացցինի (27 տարեկան, Ի. Միլան), նոյնպէս վտանգաւոր յառաջապահ մըն է:

Իտալացիք միշտ ալ ակնկալած են որ յաջողին Եռլոյի մրցաշարքերուն, սակայն այդպէս չէ եղած: Զտումի մրցումներուն անոնք արձանագրեցին դրական արդիւնքներ: Ո՛չ մէկ պարտութիւն արձանագրեցին:

«Եռլո 2012»-ի ծիրէն ներս իտալացիք խմբակից ունին Ելրոպայի եւ աշխարհի ախոյեան Սպանիան, տոկուն Այիրը եւ անակնկալներու կազմը՝ Խըրլաթիան: Իտալացիք առաջին մրցումը պիտի կատարեն ախոյեան Սպանիոյ դէմ եւ պիտի փորձեն դրական արդիւնքով աւարտել զայն: Իսկ մնացեալ երկու մրցումներուն յաղթանակ արձանագրելը անհրաժեշտութիւն է ազգային խումբին համար, այլապէս իտալացիք ստիպուած կ'ըլլան յաջորդ մրցումներուն հետեւելու պատկերասփիւռէն:



ԱՅԻՐ



Այիրի ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է մէկ անգամ՝ 1988-ին: Կատարած է 3 մրցում: Արձանագրած է 1 յաղթանակ, 1 հաւասարութիւն եւ 1 պարտութիւն: Նշանակած է 2 կոլ եւ ստացած է 2 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Ճիովանի Թրափաթոնի:

«Եուրո 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Այիրի ազգային խումբը Բ. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 10 մրցում, արձանագրելով 6 յաղթանակ, 3 հաւասարութիւն եւ 1 պարտութիւն: Նշանակեց 15 կոլ եւ ստացաւ 7 կոլ: Ան գրաւեց խմբակին Բ. դիրքը: Երկրորդ դիրքը գրաւելով ան իրաւունք ստացաւ մրցելու փլէյ-օֆի մրցումներուն: Երթ ու դարձի դրութեամբ մրցեցաւ էսթոնիոյ դէմ եւ 4-0, 1-1 արդիւնքով յաղթելով՝ հասաւ «Եուրո 2012»-ի աւարտական հանգրուան:

Այիրի կազմը երկրորդ անգամ ըլլալով կը մասնակցի Եւրոպայի ախոյեանութեան: Առաջին մասնակցութիւնը բաւական տպաւորիչ էր: Այդ օրերուն

անոնք պարտուեցան ախոյեան Հոլանտայէն եւ դուրս մնացին մրցաշարէն: Մարզիչ Ճէք Չարլթըն յաջողած էր ստեղծել ներդաշնակ կազմ մը, որ կը նկատուէր «դժուար» խումբ: Այսօր այդ պատկերը արդէն չկայ: Իտալացի անուանի մարզիչ Թրափաթոնի պիտի փորձէ նորանոր յաջողութիւններ արձանագրել ֆուտպոլի աշխարհի այս համեստ կազմին հետ:

Այիրի կազմին ամէնէն յայտնի եւ կատարեալ մարզիկը, անկասկած, անոր փորձառու բերդապահ Շէյ Կիվընն է: Ասթոն Վիլլայի մաս կազմող 36 տարեկան այս մարզիկը, որ նախապէս մաս կազմած է անգլիական բազմաթիւ ակումբներու, 120 անգամ կրած է ազգային խումբին շապիկը: Ան կը նկատուի մրցաշարի ամէնէն վստահելի բերդապահներէն մէկը: Կիվընը կրնան փոխարինել Բէյրըն Ուէսթուոտ (27 տարեկան, Սանտորլէնտ) կամ Պրայըն Մըրֆի (28 տարեկան, Քուինզ Փարք Ռէյնս-ճըրզ):

Այիրի մարզիկներու ջախջախիչ մեծամասնութիւնը անգլիական ակումբներու մաս կազմելով՝ ի վիճակի է

ամուր պաշտպանողական մը կազմելու: Կ'արժէ յիշել Սթեֆըն Բելլին (28 տարեկան, Ֆուլհէմ), Ճոն Օշէան (30 տարեկան, Սանտորլէնտ), Շոն Լէճըրը (27 տարեկան, Լայսթըր Սիթի), Տարէն Օտէան (25 տարեկան, Լիօ), փորձառու Բեռն Բիլլընը (35 տարեկան, Հալ Սիթի), որ 115 անգամ կրած է ազգային խումբին շապիկը, Մարք Ուիլսընը (24 տարեկան, Սթոք Սիթի), Սիարան Բլարը (22 տարեկան, Ա. Վիլլա) եւ Սթեֆըն Ուարտը (26 տարեկան, Վուլվը): Նման մարզիկներով մարզիչ Թրափաթոնի պիտի յաջողի ամուր պատնէշ մը քաշել Այիրի բերդին առջեւ, զայն անառիկ պահելու համար մրցակիցներու գրոհներէն:

Միջնապահ գիծին համար Թրափաթոնի շատ լուծումներ չունի: Ամէնէն փորձառուն Ֆուլհէմի 33-ամեայ Տարմէն Տաֆն է: Անոր կողքին են Սթեֆըն Հանթը (30 տարեկան, Վուլվը), Կլէն Ուիլընը (28 տարեկան, Ս. Սիթի), Այտըն ՄըքԿէյտին (25 տարեկան, Սպարտակ Մոսկուա) եւ Բէյթ Էնտրուզը (31 տարեկան, Ուէսթ Պրոմուիչ): Փոխարինողներ կրնան ըլլալ Փոլ Կրին (28 տարեկան, Տերպի Բաունթի), Սիամուս Բոլման (23 տարեկան, Էվըրթըն), Ճէյմս ՄըքՔարթի (21 տարեկան, Ուիկըն), Տարըն Կիպսըն (24 տարեկան, Էվըրթըն) եւ Ճէյմս ՄըքՔիլին (22 տարեկան, Սանտորլէնտ): Միջնապահ գիծին վրայ չկան միջազգային ծանօթ մարզիկներ, սակայն իրլանտացիք ծանօթ են իրենց տոկունութեամբ ու յամառ պայքարողի համբաւով:

Յառաջապահ գիծի ու ազգային խումբի ամէնէն նշանաւոր ու փորձառու մարզիկը Ռոպի Բիննն է: Խումբին խմբապետ 31-ամեայ Բինն, որ 115 անգամ կրած է ազգային խումբին շապիկը, ներկայիս մաս կը կազմէ Մ. Նահանգներու Լոս Անճըլըս Կալաքսիին: Բինն ծանօթ ֆուտպոլիստ է անգլիական

ախոյեանութեան: Երկար տարիներ ան մաս կազմած է անգլիական բազմաթիւ ակումբներու (Ուէսթ Համ, Թոթենհամ, Քովընթրի, Լիծ, Լիվըրփուլ, Ասթոն Վիլլա եւ այլն): Ան հանդէս եկած է նաեւ Սելթիքի եւ Ինթէր Միլանի շապիկով: Այլ խօսքով, փորձառու եւ կոլերու վարպետ Քին տարիքի բերմամբ հաւանաբար վերջին անգամ կը մասնակցի Եուրոյի եւ պիտի ուզէ իր «հետքը» ձգել: Քինի օգնականներ կրնան ըլլալ Ուէսթ Պրոմուիչի յառաջապահ գոյգը՝ 25-ամեայ Շէյն Լոնկը եւ 24-ամեայ Սայմըն Քոքսը: Բնականաբար, ամէնէն հաւանական ընկերակիցը անոր Վուլվզի յառաջապահ Քեւըն Տոյլն է: 28 տարեկան Տոյլ 46 անգամ կրած է ազգային խումբին շապիկը եւ Թրափաթոնի նախասիրած մարզիկներէն է: Երիտասարդ փոխարինող է նաեւ Սելթիքի 23-ամեայ Էնթոնի Սթոքսը:

Այրի մասնակցութենք «Եուրո 2012»-ի աւարտականներուն բաւական ազմկայարոյց խնդիր եղաւ: Հայաստանի դէմ անոր վերջին մրցումը հարցա-



կաններ ստեղծեց: Իրլանտացիք, որ տարիներէ ի վեր հեռու են նման մրցաշարքերէ, այնքան ալ յոյս չեն ներշնչեր իրենց այս վերադարձով: Խումբին անդամներուն մեծամասնութիւնը հակառակ անգլիական ակումբներու մաս կազմելուն, ոչ անուանի մարզիկներ են եւ մաս կը կազմեն ոչ այնքան անուանի ակումբներու, ու հետեւաբար վստահութիւն չեն ներշնչեր: Անոնք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն Յունիս 10-ին, Խրուաթիոյ դէմ: Մրցակից մը, որուն դէմ ցարդ մրցած են 6 ան-

գամ, արձանագրելով 2 յաղթանակ եւ կրելով 1 պարտութիւն: Սակայն միւս երկու խմբակիցները նախկին ախոյեաններ են: Անոնց հետ կատարած Այրի մրցումներուն արդիւնքներուն նժարը ի նպաստ մրցակիցներուն է: Իտալիոյ դէմ կատարած 11 մրցումներէն, այրցիք յաղթած են 2 մրցում, մինչ 7 մրցում աւարտած է պարտութեամբ: Իսկ Սպանիոյ դէմ կատարած 24 մրցումներէն անոնք յաղթած են 4 մրցում, իսկ պարտուած են 13 մրցում: Այլ խօսքով, թէ՛ պատմութիւնը եւ թէ՛ ներկայի տրեւալները այրցիներուն ի նպաստ չեն: Մարզիչ Թրափաթոնի եւ մարզիկները կը գտնուին դժուար առաքելութեան մը դիմաց: Անոնք առնուազն պիտի փորձեն տպաւորել իրենց համակիրներն ու ֆոլթպոլասէր հասարակութիւնը, այնպէս ինչպէս կատարեցին իրենց նախորդները 25 տարի առաջ:

Շատ հաւանաբար, Յունիս 18-ին, Իտալիոյ դէմ անոնց մրցումը ըլլայ վերջինը «Եուրո 2012»-ի մրցումներու ծիրէն ներս:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

ԽՐՈՒՄԹԻՄ



տեղծել: Անոնք ունին փորձառու եւ բարձր մակադրակի ֆուլթպոլիստներ:

Բերդապահուիչները պիտի վստահ-ւի ՅՅ տարեկան փորձառու Սթիփ ֓լեթիքոզայի: Փլեթիքոզա 89 անգամ կրած է ազգային խումբին շապիկը եւ բազմաթիւ անգամներ մասնակցած է նման մրցաշարքերու: Փոխարինող բերդապահներ կրնան ըլլալ ՅՅ-ամեայ Վետրան Ռունժէն եւ Մոնաքոյի երիտասարդ բերդապահ Տանիէլ Սուպասիչը:

Յետսապահ գիծին վրայ, հակառակ փորձառու ֆուլթպոլիստներու ներկայութեան, Խրուաթիա միշտ ալ կոլեր ստացող կազմ մըն է: Մասնագէտներ այս երեւոյթին գլխաւոր պատճառը կը նկատեն Խրուաթիոյ կազմին կիրարկած յարձակողական ոճը: Այս ախոյեանութեան ալ անոնք օժտուած են «ամուր» պաշտպաններով: Եոսիփ Սիմունիչ (Յ4 տարեկան, Տինամօ Զադրէպօ) յետսապահ գիծի հիմնական մարզիկներէն է: Հակառակ իր յառաջացած տարիքին, ան տակաւին կը ղեկավարէ ազգային խումբին պաշտպանողականը: Անոր պիտի օգնեն Վետրան Քուրլուքա (26 տարեկան, Պ. Լեւերքուզըն),

Խրուաթիոյ ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է 3 անգամ. 2008-ին հանդիսացած է 5-րդ: Կատարած է 11 մրցում: Արձանագրած է 5 յաղթանակ, 3 հաւասարութիւն, 3 պարտութիւն: Նշանակած է 14 կոլ եւ ստացած է 13 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Սլաւէն Պիլիչ:

«Եուրօ 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Խրուաթիոյ ազգային խումբը 2 խմբակին մէջ գտնուելով, կատարեց 10 մրցում, արձանագրելով 7 յաղթանակ, 1 հաւասարութիւն եւ 2 պարտութիւն: Նշանակեց 18 կոլ եւ ստացաւ 7 կոլ: Ան գրաւեց խմբակին Բ. դիրքը: Երկրորդ դիրքը գրաւելով ան իրաւունք ստացաւ մրցելու փլէյ-օֆի մրցումներուն: Երթ ու դարձի դրութեամբ մրցեցաւ Թուրքիոյ դէմ եւ երկու խաղերուն 3-0 արդիւնքով յաղթելով՝ հասաւ «Եուրօ 2012»-ի աւարտական հանգրուան:

Խրուաթիա, որ նախապէս մաս կը կազմէր նախկին Եուրօպայի, Եւ-

րօպայի ախոյեանութիւններուն մեծ իրագործումներ չէ կատարած: Առաւելագոյնը ան յաջողած է հասնիլ մէկ ութերորդ աւարտական: Վերջին մրցաշարքին, եթէ իրաւարարին անփութութիւնը չըլլար, ապա անոնք հաստատ կիսաւարտականը պիտի խաղային Գերմանիոյ դէմ: Այս մրցաշարքին ալ խրուաթները կրնան անակնկալներ ըս-



Տանիէլ Փրանյիչ (30 տարեկան, Պ. Միլ-նիխ), Իվան Սթրինիչ (25 տարեկան, Տնեպր) եւ Տեօֆան Լոպրէն (23 տարեկան, Լիոն): Յետսապահ գիծի հիմնական մարզիկները օտար ակումբներու մաս կազմելով ձեռք բերած են փորձառու-թիւն եւ ի վիճակի են լաւ պաշտպանողական մը կազմակերպելու: Փոխարինողներ կրնան ըլլալ Տոմակոյ Վիտա (23 տարեկան, Տինամօ Զադրէպ), Կորտըն Սքելտենֆելտ (27 տարեկան, Այնթ-րախթ Ֆրանքֆորթ) եւ Եոլրիքա Պուլի-աթ (25 տարեկան, Մաքապի Հայֆա): Այս մարզիկներով խրուածները կրնան բաւական վստահելի ձեւով պաշտպանել իրենց բերդը:

Միջնապահ գիծը ունի բաւական փորձառու մարզիկներ: Հիմնական կազմով դաշտ կրնան ներկայանալ Տարիօ Սրնան (31 տարեկան, Շախթիոր-ան ազգային խումբին խմբապետն է), Նիքօ Քրանսար (27 տարեկան, Թոթեն-համ), Լուքա Մոտրիչ (26 տարեկան, Թոթենհամ) եւ Իվան Ռաքիթիչ (24 տարեկան, Սելիլյա): Այս չորս մարզիկներն ալ բազմաթիւ միջազգային մրցումներ կատարած են ու ի վիճակի են խումբին օղակողի դերը կատարելու: Սակայն, մարզիչ Պիլիչ դժուարութեան առջեւ է զանոնք փոխարինողներ գտնելու: Փոխարինողներու շարքին են Օկնիէն Վիլ-քոելիչ (28 տարեկան, Տինամօ Քիել), Թոմիսլաւ Տիւմովիչ (31 տարեկան, Սարակոսա) եւ Իվան Փերիսիչ (23 տարեկան, Պ. Տորթմոնտ): Այս վերջինները



Մարզիչ ՍԼԱՒԷՆ ՊԻԼԻՉ:

մաս կը կազմեն անուանի ակումբներու, սակայն միջազգային գետնի վրայ անծանօթ են:

Յառաջապահ գիծի վրայ ամէնէն փորձառու եւ հռչակաւոր մարզիկը ի հարկէ Պայէրն Միլնիխի 32-ամեայ յառաջապահ Իվիքա Օլիչն է: Ազգային խումբին հետ միջազգային 77 մրցում կատարած այս մարզիկը խրուածներուն յոյսն է: Անոր պիտի օգնեն Շախթիոր Տոնեցքի 29-ամեայ էտուարտօն, որ նոյնպէս կոլեր նշանակող յառաջապահ մըն է: Վոլսպուրկի 25-ամեայ Մարիօ Մանտուքիչը եւ էվրթընի 26-ամեայ Նիքի Ելաւիչը, որոնք կրնան ամբողջացնել յառաջապահ գիծը:

Խրուածները Եւրոպայի ախոյեան

նութիւններուն յաճախ դրական արդիւնքներ արձանագրած են: Անոնք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն Յունիս 10-ին, Այիրի դէմ: Այս մրցումին անոնք պիտի փորձեն անպայման յաղթանակ մը արձանագրել: Յաջորդ երկու մրցումներուն խրուածները դժուար «աշխատանք» ունին կատարելիք: Անոնք պիտի մրցին վերջին երկու մոնտիալներու ախոյեաններուն՝ Իտալիոյ եւ Սպանիոյ դէմ: Յունիս 14-ին՝ Իտալիոյ եւ Յունիս 18-ին՝ Սպանիոյ դէմ մրցումները ճակատագրական պիտի ըլլան: Խրուածները պիտի չուզեն որ իրենց ճամբորդութիւնը կարճ տեւէ: Սակայն, մարզիչ Պիլիչի տղաքը կը գտնուին շատ դժուար առաքելութեան մը առջեւ: Անոնք հեռու են այն փաղանգի մակարդակէն, երբ Ֆրանսայի մոնտիալին խումբը հասցուց երրորդ դիրք: Անոնք նոյնիսկ չունին վերջին Եուրոյի խումբին մակարդակն ու խաղաճոճը: Քովաչ եղբայրներու եւ Սիմիչի հրաժեշտէն ետք խումբը տակաւին ինքզինք չէ վերահաստատած նախկինին պէս: Փաստօրէն, զտումի մրցումներուն, հակառակ որ անոնք դժուար խմբակի մը մէջ չէին, գրաւեցին միմիայն Բ. դիրքը եւ փլէյ-օֆով հասան Եուրոյի աւարտականներուն:

Վերջապէս, մարզիչ Պիլիչ կը գիտակցի իր խումբին կարողականութեան եւ զայն կը նկատէ «Եուրօ 2012»-ի սոսկական մասնակից մը:



ՈՒՔՐԱՆՆԻԱ



Ուքրանիոյ ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն կը մասնակցի առաջին անգամ ըլլալով: Եւրկայիս խումբին մարզիչն է Օլէկ Պլոխին:

Ուքրանիոյ ազգային խումբը Եւրոպայի գտումի մրցումներուն չմասնակցեցաւ՝ կազմակերպիչ երկիր ըլլալով: Ան կատարեց բազմաթիւ բարեկամական մրցումներ:

Ուքրանացիք առաջին անգամ ըլլալով կը մասնակցին Եւրոպայի ախոյեանութեան: Անոնք կը մասնակցին իբրեւ հիւրընկալ եւ այդ պատճառով խումբը կը գտնուի յաւելեալ պարտաւորութեան եւ պատասխանատուութեան դիմաց: Յարդ միայն մէկ անգամ (2006) աշխարհի ախոյեանութեան մրցումներուն մասնակցած ուքրանացիք չմասնակցեցան գտումի մրցումներուն, իսկ բարեկամական մրցումներուն իրենց արձանագրած արդիւնքները շատ հակասական էին: Ճիշդ է, որ ուքրանական

ակումբներ որոշ յաջողութիւններ ունին եւրոպական մրցաշարքերուն, սակայն ազգային խումբը այդ մէկուն ցոլացումը չի կատարեր: Մարզիչ Պլոխին կը գտնուի նաեւ այլ դժուարութեան մը առջեւ եւս: Կազմին մէջ մեծ է թիւը այն մարզիկներուն, որոնք թեւակոխած են երեսուն տարիքը եւ խումբը կը գտնուի «ծերացման» սեմին, մինչ երիտասարդ մարզիկները տակաւին իրենք զիրենք չեն յաջողած փաստել:

Բերդապահութեան գլխաւոր թեկնածուն Օլէքսանդր Շովքովսքին (37 տարեկան, Տինամօ Քիւել): Ան արդէն իսկ 92 անգամ կրած է ազգային խումբին շապիկը եւ բաւական փորձառութիւն ունենալով վստահութիւն կը ներշնչէ թէ՛ մարզիչին եւ թէ՛ ընկերներուն: Զայն կրնան փոխարինել Անտրի Տիքան (Սպարտակ Մոսկուա) եւ Անտրի փիթով (Շախթիոր Տոնեցք): Երկուքն ալ հակառակ իրենց տարիքին քանի մը անգամ հանդէս եկած են ազգային խումբի շապիկով:

Ուքրանիոյ ազգային խումբի մար-

զիկներուն հիմնական մասը կու գայ Շախթիորէն, Տնեպրէն ու Տինամօ Քիւելէն: Յետապահ գիծի հիմնական մարզիկներն ալ մաս կը կազմեն վերոնշեալ կազմերուն: Օլէքսանտր Քուչըր (29 տարեկան, Շախթիոր), Թարաս Միխալիք (28 տարեկան, Տինամօ Քիւել), Վիթալի Մանժիուք (26 տարեկան, Տնեպր), Տմիթրի Շիկրինսքի (25 տարեկան, Շախթիոր), Վիաչեսլաւ Շելչուք (32 տարեկան, Շախթիոր) պիտի ըլլան յետապահ գիծի հիմնական մարզիկները: Մարզիչ Պլոխին կազմին միացուցած է նաեւ քանի մը երիտասարդ մարզիկներ, որոնք կրնան ոչ միայն իբրեւ փոխարինող, այլեւ՝ իբրեւ հիմնական մարզիկ դաշտներկայանալ: Եարոսլաւ Ռացիսքի (22 տարեկան, Շախթիոր), Վասիլ Քոպին (26 տարեկան, Շախթիոր), Եւկէն Սելին (23 տարեկան, Փոլտաւա), Եւկէն Խաչերիտի (24 տարեկան, Տինամօ Քիւել) Ուքրանիոյ ապագայ յետապահ գիծի մարզիկները պիտի ըլլան:

Մարզիչ Պլոխին կեդրոնը պիտի վստահի Անաթոլի Թիմոչչուքի (32 տարեկան, Պ. Միւնիխ): Ան պիտի ըլլայ խաղը ղեկավարող հիմնական մարզիկը: Անոր պիտի աջակցին Օլէկ Հուսիւելը (28 տարեկան, Տինամօ Քիւել), Սերկէյ Նազարենքոն (32 տարեկան, Սիմֆերոփոլ), Ռուսլան Ռոթանը (30 տարեկան, Տնեպր), Մաքսիմ Կալիշինենքոն (33 տարեկան, Սիմֆերոփոլ) եւ Օլէքսէյ Կայը (29 տարեկան, Շախթիոր): Բոլորն ալ փորձառու են եւ բազմիցս կրած են ազգային խումբին շապիկը: Սակայն անոնք ունին այլ անպատեհութիւն մը, որ քիչ մը տարիքոտ են: Երիտասարդ միջնապահները տակաւին անփորձ են, եւ մարզիչ Պլոխին արկածախնդրութեան պիտի չդիմէ զանոնք դաշտ ներկայացնելով: Պարզապէս անոնք նկատի պիտի առնուին իբրեւ փոխարինողներ:

Թարաս Սթեփանենքո (22 տարեկան, Շախթիոր), Տենիս Կարմաչ (21 տարեկան, Տինամո Քիել), Անտրէ Եարմոյենքո (22 տարեկան, Տինամո Քիել):

Ուքրանիա ունի շատ լաւ յառաջապահներ, սակայն հոս եւս մարզիչ Պլոխին կը գտնուի նոյն դժուարութեան առջեւ: Մարզիկներուն հիմնական մասը բաւական յառաջացած տարիք ունի, ինչ որ կրնայ պատճառ դառնալ որ խումբը իր կարողականութիւնը ամբողջութեամբ չկարենայ դրսեւորել: Գլխաւոր յառաջապահը միջազգային ծանօթ մարզիկ Անտրէ Շելչենքոն է (35 տարեկան, Տինամո Քիել), որ ցարդ 105 անգամ կրած է ազգային խումբին շապիկը եւ նշանակած է 46 կոլ: Խումբին խմբապետ Շելչենքո վարպետ կոլ նշանակող է, սակայն ան արդէն իսկ «ծերացած» է: Անրէ Վորոնին (32 տարեկան, Տինամո Մոսկովա) նոյն-



պէս լաւ յառաջապահ է եւ «կը հասկցուի» Շելչենքոյի հետ: Արտեմ Միլեւսքի (27 տարեկան, Տինամո Քիել) եւ Մարքո Տելիչ (28 տարեկան, Մեթալիսթ) հաւանաբար նստին պահեստի նստարաններուն վրայ:

Ուքրանացիներուն առաջին մասնակցութիւնն է Եուրոյի մրցաշարքի մը, այդ ալ իբրեւ հիւրընկալ: Անոնք կը նկատուին տոկուն մրցակից մը: Անոնց բարեկամական մրցումները բա-

ւական յուսադրիչ էին այս իմաստով:

«Եուրո 2012»-ի ծիրէն ներս անոնք խմբակից ունին Շուէտը, Ֆրանսան եւ Անգլիան: Այս բարդ խմբակին մէջ անոնք պիտի փորձեն զոհ չերթալ «մեծերու» հաշիւներուն: Շուէտի դէմ անոնց մրցումը պիտի ըլլայ փորձաքար մը: Յաղթանակ մը եւ ինքնավրտահուստիւն ձեռք ձգած ուքրանացիք կրնան անակնկալներ մատուցել Ֆրանսացիներ-

ըր եւ վերջերս անկայուն վիճակի մատնուած Անգլիոյ: Մարզիչ Պլոխին այս իմաստով ունի բաւական փորձառութիւն եւ կրնայ իր մարզիկներուն հոգեբանականօրէն ճիշդ ձեւով պատրաստել:

Կը մնայ որ ուքրանացի ֆուլթպոլիստները հետեւելով իրենց մարզիչին ցուցմունքներուն, ստիպուած չըլլան երրորդ մրցումէն ետք իբրեւ հանդիսատես դաշտ երթալու:

'Made from one single slice of natural Australian opal'

Classique
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com

ՇՈՒԷՏ



Շուեդի ազգային խումբը Եվրոպայի ազգային ախոյեանուկթիւններուն մասնակցած է չորս անգամ. 1992-ին գրաւած է չորրորդ դիրքը: Կատարած է 14 մրցում: Արձանագրած է 4 յաղթանակ, 5 հաւասարուկթիւն եւ 5 պարտուկթիւն: Նշանակած է 19 կոլ եւ ստացած է 16 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Էրիք Համրէն:

«Եուրո 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Շուեդի ազգային խումբը Ե. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 10 մրցում, արձանագրելով 8 յաղթանակ եւ 2 պարտուկթիւն: Նշանակեց 31 կոլ եւ ստացաւ 11 կոլ: Ան գրաւեց խմբակին Բ. դիրքը: Լաւագոյն երկրորդ դիրքը գրաւող կազմը ըլլալով, Շուեդի ազգային խումբը ինքնաբերաբար հասաւ «Եուրո-2012»ի աւարտական հանգրուանին:

Շուեդի ազգային խումբը յիշատակելի յաջողուկթիւն չէ ունեցած Եվրոպայի մրցաշարքերուն: Իր միակ յաջողուկթիւնը արձանագրուած է քսան տարի առաջ, երբ մրցումները կատարուած են

Շուեդի մէջ: Այս տարի անոնք համեմատաբար լաւ կազմով մը կը մեկնին Լեհաստան-Ուքրանիա՝ իրենց համակիրներուն խոստանալով բաւական երկար շրջապտոյտ մը: Զտումի մրցումներուն անոնք յաջող արդիւնքներ արձանագրեցին, սակայն այս անգամ, առաջին հանգրուանին, անոնք կը գտնուին դժուար խմբակի մը մէջ, ուր կրնան զոհ դառնալու «մեծերու» պայքարին:

Մարզիչ Համրէն բերդապահուկթիւնը պիտի վստահի Փ.Ս.Վ. Այնտհոլընի 30-ամեայ մարզիկ Անտրէաս Իսաքսընի: Ան 91 անգամ կրած է ազգային խումբին շապիկը եւ արդէն տասը տարիէ կը պաշտպանէ Շուեդի բերդը: Զայն փոխարինողները միջազգային գետնի վրայ անփորձ են: Եոհան Ուիլանտ (31 տարեկան, Քոփենհէյկըն), Եոհան Տահլին (25 տարեկան, Մալմօ), Փար Հանսըն (25 տարեկան, Հելսինկուրկ) եւ Քարլ-Եոհան Եոնսըն (22 տարեկան, Հալմսթատ) կրնան փոխարինել Իսաքսընը:

Շուեդի ազգային խումբին յետսպահ գիծը մարզիչ Համրէն պիտի

վստահի «օտարականներուն»: Օլոֆ Մելպերկ (34 տարեկան, Օլիմփիաքոս) եւ Տանիէլ Մայսթորովիչ (34 տարեկան, Սելթիք), հակառակ իրենց յառաջացած տարիքին, ազգային խումբին համար կը մնան բանալի տարրեր: Անոնց պիտի ընկերակցին Օսքար Ուէնտրթ (26 տարեկան, Պ. Մուլընկլատպախ), Անտրէաս Կրանքվիսթ (26 տարեկան, Ճենովա), Պեհրանկ Սաֆարի (27 տարեկան, Անտրլէխթ), Էտրմ Եոհանսըն (29 տարեկան, Սիէթլ Սաունտըրզ) եւ Միքայէլ Լուսթիք (25 տարեկան, Սելթիք): Այս բոլոր մագիկներն ալ օտար ակումբներու մաս կազմելով ունին փորձառուկթիւն եւ կրնան ազգային խումբին առաւելագոյն չափով օգտակար ըլլալ: Համրէն իր տրամադրուկթեան տակ ունի նաեւ այլ երիտասարդ յետսպահներ, զորս վերջին վայրկեանին կրնայ հրաւիրել ազգային խումբ:

Միջնապահ գիծի երկու հիմնական մարզիկներն են փոխ խմբապետ Անտերս Սվենսըն (35 տարեկան, Էլֆսպորկ) եւ Քրիսթիան Ուիհելմսըն (32 տարեկան, Ալ Հիլալ): Հիմնական մարզիկ է նաեւ Քիմ Քալսթրոմը (29 տարեկան, Լիոն): Ազգային խումբի միջնապահ գիծը կրնան ամբողջացնել Էմիր Պայրամի (24 տարեկան, Թվենթէ), Օլա Թոփվոնըն (25 տարեկան, Փ.Ս.Վ. Այնտհոլըն), Ռասմուս Էլմ (23 տարեկան, ԱԶ) եւ Սեպասթիան Լարսըն (26 տարեկան, Սանտըրլէնտ): Նման խաղացողներով շուեդացիք կրնան գեղեցիկ ֆուկթպոլ ներկայացնել ու յաղթանակներ արձանագրել որեւէ կազմի դէմ:

Յառաջապահ գիծի վրայ ամէնէն վստահելի մարզիկը խմբապետ Զլաթան Իպրահիմովիչն է (Ա. Սէ. Միլան): 30-ամեայ այս մարզիկը աւելի քան տասը տարիէ կը կրէ ազգային խումբին շապիկը եւ անոր հետ կատարած է 75 մրցում: Նախապէս ան մաս կազմած է

Մալմոյի, Այաքսի, Ինթերի, Եռվէի եւ Պարսալի: Իպրահիմովիչ կոլեր նշանակող երկարահասակ մարզիկ մըն է: Ազգային խումբին հետ ցարդ նշանակած է 29 կոլ: Անոր կողքին են Եոհան Էլմանտըր (30 տարեկան, Կալաթասարայ), Թոպիաս Հիսէն (30 տարեկան, Կէօթըպըրկ), Մարքուս Ռոզընպըրկ (29 տարեկան, Վ. Պրեմըն) եւ Մարքուս Պըրկ (25 տարեկան, Համպուրկ): Այս բոլոր մարզիկներն ալ իրենց ակումբներուն հետ յաջողած մարզիկներ են, իսկ ազգային խումբին հետ կատարած իրենց մրցումներուն ընթացքին կոլեր նշանակած են:

Շուէտի ազգային խումբը նշանակալից յաջողութիւններ չունի Եուրոյի մրցաշարքերուն: Ճիշդ է, որ գտումի մրցումներուն անոնք մասնաւոր դժուարութիւն չունեցան, բայց եւ այնպէս աւարտական մրցումներուն պէտք է արդէն աւելի խստապահանջ ըլլալ: Շուէտացիք կը գտնուին դժուար խմբակի մը մէջ: Անոնք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն կազմակերպիչ Ուքրանիոյ դէմ, որ իր կարգին պիտի փա-



փաքի բացման մրցումը յաղթանակով սկսիլ: Շուէտի յաջորդ երկու մրցակիցները Ֆրանսան ու Անգլիան են: Երկուքն ալ զօրաւոր կազմեր են ու մեծ առաջատորներ: Եթէ անգլիացիք կը դիմագրաւեն որոշ դժուարութիւններ, ապա Ֆրանսացիք բաւական պատ-

րաստուած են ու պիտի չիյնան ծուղակներու մէջ:

Շուէտի համակիրները յոյսով են որ իրենց ազգային խումբը միայն տասը օրուան համար չի մեկնիր Ուքրանիա:

with the complements of

Restaurant Al-Mayass

ՖՐԱՆՍԱ



պաշտօնին համար ունի քանի մը թեկնածուներ: Ամէնէն վստահելին ու փորձառուն Լիոնի Հիւլիօ Լիորիսն է: 25-ամեայ այս մարզիկը 30 անգամ կրած է ազգային խումբին տարազը եւ Պլանի նախասիրած բերդապահն է: Զայն կրնան փոխարինել Սետրիք Քարասօն (30 տարեկան, Պորտո) եւ Սթիւ Մանտանտան (26 տարեկան, Մարսէյ):

Յետսպահ գիծի հիմնական խաղացողները մաս կը կազմեն օտար ակումբներու. Փաթրիս Էվրա (30 տարեկան, Մ. Եռնայթըտ), Էրիք Ապիտալ (32 տարեկան, Պարսելոնա) եւ Ֆիլիպ Մեքսէս (29 տարեկան, Ա.Սէ. Միլան): Այս եռեակին շուրջ Պլան համախմբած է քիչ թէ շատ փորձառու եւ նորեկ մարզիկներ՝ Ատիլ Ռամի (26 տարեկան, Վալենսիա), Մամատու Սախօ (22 տարեկան, Փ.Ս. Ժերմէն), Անթոնի Ռեւեյէր (32 տարեկան, Լիոն), Մաթիու Տեպուշի (26 տարեկան, Լիլ), Պաքարի Սանիա (29 տարեկան, Արսենալ) եւ Կայէլ Բլիշի (26 տարեկան, Մ. Սիթի): Այս մարզիկներով Պլան յոյս ունի անառիկ պահելու բերդապահ Հիւլիօ Լիորիսի բերդը:


Ցրանսայի ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է եօթը անգամ. 1984-ին եւ 2000-ին դարձած է ախոյեան: 1964-ին եւ 1996-ին հանդիսացած է չորրորդ: Կատարած է 28 մրցում: Արձանագրած է 14 յաղթանակ, 7 հաւասարութիւն, 7 պարտութիւն: Նշանակած է 46 կոլ եւ ստացած է 36 կոլ: Ներկայիս խումբին մարզիչն է Լորան Պլան:

«Եուրօ 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Ցրանսայի ազգային խումբը Գ. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 10 մրցում, արձանագրելով 6 յաղթանակ, 3 հաւասարութիւն եւ 1 պարտութիւն: Նշանակեց 15 կոլ եւ ստացաւ 4 կոլ: Ան գրաւեց խմբակին Ա. դիրքը եւ հասաւ «Եուրօ 2012»-ի աւարտական հանգրուան:


Երկու անգամ Եւրոպայի ախոյեան հանդիսացած եւ երկու անգամ չորրորդ դիրք գրաւած, Մոլիէրի երկիրը բաւական համեստ կը ներկայանայ այս ախոյեանութեան: Վերջին երկու միջազգային մրցաշարքերուն անոր արձանագրած

ձախողութիւնները պատճառ են որ այսօր ան չդասուի «մեծերու» շարքին: Հակառակ անոր, Ցրանսայի ախոյեանութիւնը կը մնայ հետաքրքրական, իսկ մարզիչ Պլան յաջողած է անցեալի «մուկ» օրերը ետին ձգել, կազմելով զօրաւոր խումբ մը, որ ի վիճակի է բաւական յառաջ երթալու:

Մարզիչ Պլան բերդապահութեան



Բերդապահ Հիւլիօ Լիորիս:



Էրիք Ապիտալ:



Ֆլորինան Մալուտա:



Ֆլորան Օհայերի:

Ազգային խումբին ամենէն աչքառու մարզիկը կը մնայ միջնապահ Ֆրանք Ռիպերին (28 տարեկան, Պ. Միլնիթս), որ աւելի շատ յառաջապահի պարտականութիւն կը կատարէ: Ռիպերի յարձակումներ կազմակերպող, «ճեղքող», կոլի առիթներ ստեղծող, յաճախ նաեւ կոլ նշանակող միջնապահ է: Միջնապահ գիծի վրայ մեծ աշխատանք կը տանի նաեւ Ֆլորինան Մալուտա (31 տարեկան, Չելսի): Մալուտա հսկողի դեր վերցնող է: Արսենալի 24-ամեայ

միջնապահ Սամիր Նասրի յարձակումներ կազմակերպող ու կոլի առիթներ ստեղծող է: Հիմնական այս երեք միջնապահներուն պիտի ընկերակցին Եոհան Բորքուֆ (25 տարեկան, Լիոն), որ յարձակումներ սիրող միջնապահ է, Ապու Տիապի (25 տարեկան, Արսենալ), Ապու Տիարա (30 տարեկան, Մարսէյ) եւ Եոհան Քապայէ (26 տարեկան, Նիւքէսթլ):

Յառաջապահ գիծի ամենէն ծանօթ մարզիկը Ռէյալ Մատրիտի յառաջապահ Քարիմ Պենզիման է: Հակառակ երիտա-

սարդ տարիքին (24 տարեկան), ան արդէն 42 անգամ կրած է ազգային խումբին շապիկը: Անոր պիտի ընկերակցին երկու փորձառու յառաջապահներ՝ Լուիս Սահան (33 տարեկան, Թոթենհամ) եւ Ճիպրիլ Սիսէն (30 տարեկան, Քուինզ Փարք Ռէյնճըրզ): Երիտասարդ յառաջապահներ Օլիվիէր Ժիրու (25 տարեկան, Մոնփրիէր), Քեւրն Կամիերո (24 տարեկան, Փ.Ս. Ժերմէն), Լոիք Ռէմի (25 տարեկան, Մարսէյ) եւ Ճերեմի Մենէզ (24 տարեկան, Փ.Ս. Ժերմէն) պիտի փորձեն Պենզիմայի կողքին ներկայանալ հիմնական կազմին հետ:

2008-ի Եուրոյի եւ 2010-ի մոնտիալի ձախող արդիւնքներէն ետք, Ֆրանսացիք աւելի զօրաւոր եւ մանաւանդ աւելի լաւ կազմակերպուած կը ներկայանան այս մրցաշարքին: Զտումի առաջին մրցումին պարտութիւն կրելէ ետք, երբ կը կարծուէր թէ Ֆրանսացիք դարձեալ պիտի ձախողէին, մարզիչ Պլանի տղաքը յաղթանակէ յաղթանակ արձանագրելով հասան աւարտականներ: Խմբակին մէջ անոնք ունին հին ու մնայուն մրցակիցներ: Անգլիոյ դէմ իրենց առաջին մրցումին անոնք պիտի փորձեն յաղթանակ ապահովել, նկատի ունենալով որ կազմակերպիչ Ուքրանիոյ դէմ պիտի կատարեն իրենց երկրորդ մրցումը: Շուէտի դէմ խմբակին վերջին մրցումը կրնայ կարեւոր եւ վճռական ըլլալ:



Քարիմ Պենզիմա:

ԱՆԳԼԻԱ



Անգլիոյ ազգային խումբը Եւրոպայի ազգային ախոյեանութիւններուն մասնակցած է եօթը անգամ. 1964-ին եւ 1996-ին հանդիսացած է երրորդ: Կատարած է 23 մրցում: Արձանագրած է 7 յաղթանակ, 7 հաւասարութիւն, 9 պարտութիւն: Նշանակած է 31 կոլ եւ ստացած է 28 կոլ: Ներկայիս խումբին առժամեայ մարզիչն է Սթիուըրթ Փիրս:

«Եուրո 2012»-ի գտումի մրցումներու ծիրէն ներս, Անգլիոյ ազգային խումբը է. խմբակին մէջ գտնուելով, կատարեց 8 մրցում, արձանագրելով 5 յաղթանակ եւ 3 հաւասարութիւն: Նշանակեց 17 կոլ եւ ստացաւ 5 կոլ: Ան գրաւեց խմբակին Ա. դիրքը եւ հասաւ «Եուրո 2012»-ի աւարտական հանգրուանին:

Անգլիոյ ազգային խումբը յիշատակելի ոչ մէկ յաջողութիւն արձանագրած է Եւրոպայի ախոյեանութիւններուն: Ան միայն երկու անգամ յաջողած է հասնիլ կիսաւարտական: Մնացեալ մրցաշարքերուն ալ ան ունեցած է լուսանցքային դերակատարութիւն:

Մարզիչ Քափելլոյի մեկնումէն ետք,

Սթիուըրթ Փիրս ստանձնած է ծանր պարտականութիւն մը: Ծիշդ է, որ ան ժամանակաւոր մարզիչ է, սակայն իր վրայ դրուած են մեծ յոյսեր: Փիրս բերդապահութեան համար շատ կարելիութիւններ չունի: Ան Անգլիոյ բերդը պիտի վստահի Ջո Հարթի (24 տարեկան, Մ. Սիթի), Ռոպըրթ Կրիսի (32 տարեկան, Ուէսթ Համ Եուենայթըտ) եւ կամ Աքրթ

Քարսընի (26 տարեկան, Պուրսասփոր): Բնականաբար, այս երեքին մէջ ամէնէն վստահելին Ջո Հարթն է: Թէեւ ան հազիւ 16 անգամ կրած է ազգային խումբին շապիկը, սակայն իր ակումբին հետ բարեյաջող ելոյթներն ու ազգային խումբին հետ իր կատարած քիչ թիւով մրցումները նոյնիսկ վստահութիւն կը ներշնչեն մարզիչին:


Յետսապահ գիծին հիմնական խնդիրը ձոն Թերիի մասնակցութեան հարցն է: Թերի անձնական հարց մը ունեցած էր, եւ Անգլիոյ ֆութպոլի ֆետերասիոնը զայն հեռացուցած էր ազգային հաւաքականէն: Այս որոշումը պատճառ դարձաւ որ իտալացի մարզիչ Ֆապիո Քափելլո ներկայացնէ իր հրաժարականը: Թերիի բացակայութեան, իր ընկերները աւելի պիտի համախմբուին Ռիօ Ֆերտինանտի (33 տարեկան, Մ. Եուենայթըտ) շուրջ: Ֆերտինանտ ամէնէն հին ու փորձառու մարզիկներէն է ազգային խումբին մէջ: Իբրեւ կեդրոնի յետսապահ, ան վստահելի է եւ յոյս կը ներշնչէ իր խմբակիցներուն: Անոր կողքին են երկու փորձառու յետսապահներ՝ Էլլի Քոլ (31 տարեկան, Չելսի)



Ֆրանք Լամպար:

եւ Կլէն Ճոնսոն (27 տարեկան, Լիվրփուլ): Այս եռեակը պիտի ամբողջացնեն Ճոլէոն Լեսքոթը (29 տարեկան, Մ. Սիթի), Միքա Ռիչըրտսը (23 տարեկան, Մ. Սիթի), Ֆիլ Ֆոնզը (20 տարեկան, Մ. Եոլնայթրտ) եւ Քիլլ Ուոքըրը (21 տարեկան, Թոթենհամ):

Միջնապահ գիծին աշխատանքը պիտի կեդրոնանայ Ժեռար-Լամփար զոյգին վրայ: Սթիվըն Ժեռար (31 տարեկան, Լիվրփուլ) եւ Ֆրանք Լամփար (33 տարեկան, Չելսի) հակառակ իրենց յառաջացած տարիքին կը մնան գործունեայ մարզիկներ: Անոնք երկուքն ալ յարձակումներ կազմակերպող, առիթներ ստեղծող եւ կոլ նշանակող են: Լամփար նաեւ կ'օգնէ յետսապահներուն, մինչ Ժեռար աւելի շատ խաղ կազմակերպող է: Այս երկուքին պիտի օգնեն Կարէթ Պէրի (31 տարեկան, Մ. Սիթի), Էշլի Եանկ (26 տարեկան, Մ. Եոլնայթրտ), վերջերս մարզիչ Փիրսի կողմէ խմբապետ նշանակուած Սքոթ Փարքըր (31 տարեկան, Թոթենհամ), Թէօ Ուալքոթ (22 տարեկան, Արսենալ), ըՍթիուերթ Տաունինկ (27 տարեկան, Լիվրփուլ), Միքայէլ Քարիք (30 տարեկան, Մ. Եոլնայթրտ) եւ Աարոն Լենըն (24 տարեկան, Թոթենհամ): Անհատապէս միջնապահ գիծը կը թուի ըլլալ բաւական լաւ եւ տոկուն՝ կարենալ կազմակերպելու Անգլիոյ յարձակումներն ու պաշտպանողականը, բայց արդեօք Փիրս պիտի կարենա՞յ խմբային յաջող խաղ կազմակերպել:



Սթիվըն Ժեռար:

Յառաջապահ գիծի վրայ ամէնէն յուսատու եւ փորձառու մարզիկը Մ. Եոլնայթրտի 26-ամեայ Ուէյն Ռուսին է: Ճիշդ է, որ ան չէ կրցած լեցնել Լինքքըրներու, Շիրըրներու տեղը, սակայն կը մնայ տոկուն եւ արագ յառաջապահ մը, որ ատակ է անակնկալ ու վճռորոշ կոլեր նշանակելու: Ռուսի գրեթէ առանձին է: Անոր կրնան օգնել Ճերմըն Տէֆօ (29 տարեկան, Թոթենհամ), երկարահասակ Փիթըր Քրաուչ (31 տարեկան, Սթոք Սիթի) եւ Տարըն Պէնթ (28 տարեկան, Ա. Վիլլա): Փիրս իր տրամադրութեան տակ ունի նաեւ երիտասարդ յառաջապահներ, որոնք կրնան ազգային խումբին շապիկով հանդէս գալ այս մրցաշարքին:

Անգլիացիք ճիշդ է որ կը պատկանին

Եւրոպայի «հսկաներու» խմբակին, բայց եւ այնպէս անոնք եւրոպական մրցաշարքերուն այնքան ալ յաջողութիւններ չեն արձանագրած: Այս տարի ալ Անգլիոյ համակիրները մեծ ակնկալութիւններ չունին իրենց կազմէն: Մարզիչ Քափելլոյի մեկնումէն ետք, խումբը կը գտնուի անորոշ վիճակի մէջ: Մարզիչ Փիրսի հետ ան կատարեց բարեկամական մէկ մրցում Ուէմպլիի մէջ եւ Հոլանտայէն պարտուեցաւ 3-2 արդիւնքով:

Յունիս 11-ին անգլիացիք իրենց առաջին մրցումը պիտի կատարեն իրենց դրացի «Թշնամիին»՝ Ֆրանսայի դէմ: Ֆրանսացիք աւելի կազմակերպուած կը թուին ըլլալ: Յաջորդ մրցումը չորս օր ետք անոնք պիտի կատարեն կազմակերպիչ Ուքրանիոյ դէմ: Իսկ անոնք խմբակի իրենց վերջին մրցումը պիտի կատարեն Շուէտի դէմ: Ուքրանացիք պիտի փորձեն օգտուիլ իրենց դաշտին վրայ մրցելու առաւելութենէն եւ հասնիլ յաջորդ հանգրուան: Մինչ շուէտացիք բաւական լաւ ձեւով կատարեցին գտումի մրցումները եւ կրնան գլխացաւ պատճառել անգլիացիներուն:

Ռուսի, Ժեռար, Լամփար եւ ընկերները մարզիչ Փիրսի ցուցմունքներով ծանր պարտաւորութեան մը առջեւ են: Անոնք կրնան կանուխ հրաժեշտ տալ մրցաշարքին: Կարգ մը մարզիկներու համար այս մրցաշարքը հաւանաբար ըլլայ վերջինը, ուստի անոնք ջանք պիտի չխնայեն որ ազգային խումբի շապիկով իրագործում մը կատարեն:

Ուէյն Ռուսի:





UEFA

EURO2012

POLAND-UKRAINE